ՀԱՄԱՌՕՏ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԳՐՈՑ

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆԻ

ԶՈՐ ՓՈԽԵԱՑ ՅԱՇԽԱՐՀԻԿ
ԲԱՐԲԱՌ
ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒ

ԱՒԵՏԻՔ Կ. Մ. ԶՕՀՐԱՊԵԱՆՑ

Ի ՆՈՐ ՋՈՒՂԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ
ՍՈՒՐԲ ՎԱՆԱՑ
1879

47261

# ՀԱՄԱՌՕՏ
# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԳՐՈՑ

'Ի ՊԷՏՍ ԴՊՐՈՑԱՑ

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆԻ

Ի Կ. ՊՕԼԻՍ 1873.

ԶՈՐ ՓՈԽԵԱՑ ՅԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՐԲԱՌ
ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒ

ԱՒԵՏԻՔ Կ. Մ. ԶՕՀՐԱՊԵԱՆՑ

ԱՐԴԵԱՄԲՔ ԳԵՐԱՊԱՏԻՒ ՀԱՍԱՐԱ-
ԿՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԲԹԱՒԻՈՅ

ՏՊԵԱԼ
Ի ՆՈՐ ՋՈՒՂԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ Ս.
ՎԱՆԱՑ

1879

ԳՐԱԴԱՐԱՆ

# Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
## ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՅ Դ.
## ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ

# ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ
## ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՍՈՒՐԲ ՎԱՆԱՑ
## ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒ
## ՏԵԱՌՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ
## ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԳԵՐԱՊԱՏՈՒԵԱԼ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԱԶԳԱՅՆՈՑ ՄԵՐՈՑ ԲՆԱԿԵԼՈՑ 'Ի ԲԸ-ԹԱՒԻԱ:

'Ի ԲԹաւիա.

Ազգասէր Պարոնայք՝

Առ ծյս ամանս էյէ մեզ արժան վերընծայել զմատենիկս նոր 'ի լոյս ելեալ 'ի տպարանէ Ամենափրկչեան սրբոյ վանաց մակագիր ունելով "Համառօտ Պատմութիւն սուրբ գրոց" յեղեալ յաշխարհիկ բարբառ Նոր Ջուղայուս առ հեշտի պէտս մանկանց Դպրոցաց, հեղինակութիւն Ա. Մ. Գարագաշեան ներհուն բանասիրին՝ ինծէ ոչ առ գերապատուեալ Հասարակութիւն Հայ Ազգայնոցս մերոց ԲԹաւիու, որ գովանի և եռանդուն Ազգասիրութեամբ և Հայրենասիրութեամբ յատուկ բարերար հանդիսացայք նոյն Տպագրատան, կամակար օժանդակել զդրամական նպաստ 'ի ծախս նորին, և ոչ այսչափ միայն՝ այլ և հաստատեցիք եկամուտ ինչ ամբաստամշական լինել 'ի-

տարեոր օգնականութիւն Նորին։ Ահա այս շնորհէ՛ որ խրախոյս մեծ և քաջալերս ազդեաց 'ի սիրտ մեր յառաջ վարել անխոնջ զտպագրութեանն գործ յօգուտ և 'ի բարգաւաճանս ուսմանց մանկրտեաց ամենասիրելի Ազգիս, և դարձեալ այս շնորհ Ձեր Ազգասիրական՝ որ պարտուպատշաճն պարտուք պարաւանդէ զմեզ խոնարհ հոգաբարձութիւնս Նորին երախտագէտ զգացմամբ 'ի Ձերոց զՁերն Ձեզ տալ յուղերձ և 'ի ձօն, և 'ի ճակատու այնր դրոշմել զայն 'ի յաւերժական յիշատակ Ազգասիրի անուան Ձերոյ։ Ուրեմն ընկալարուք զառ 'ի տպարանէս զնուէրս զայս դուզնաքեայ ոչ ըստ արժանի Ձերում շնորհապարգև բարերարութեանց, այլ յաւէտ 'ի սիրտս խոր յառեալ 'ի մեր և զխղճս նշմարեալ։

Ապաքէն այսու բարիք կրկին և մեծ վերընծային անտիական և մատաղ մանկտեաց, մի՛ զի սովին ըստ բանի հրահանգեսցին 'ի գլխաւոր պատմութիւնս Հին և Նոր Կտակարանաց, որ 'ի նմին համառօտիւ պարունակին, զի ապա 'ի մատչել 'ի բուն Աստուածաշունչ մատեանն՝ բազմօք դիւրեսցի նոցա ուսումնքն, և միւս ևս՝ քաջ 'ի վերայ հասանիցեն Աստուածահրաման պատգամաց, և Սրբազան պատմութեանցն՝ որ հիմունքն են սուրբ կրօնիցս Քրիստոնէութեանս, որովք և ճանաչելոց են զսուրբ հաւատս ուղղափառս, և զբարոյական պարտաւորութիւնս իւրեանց։

Պատիւ անձանց համարիմք

'ի Ջուղա. 1879.
'ի 18 Ապրիլ։

Մնալ

Գերապատուութեան Ձերում

խոնարհ և երախտագէտ ծառայք՝

Տէր Դաւիթ Ս. Նահապետեան.
Տէր Մեսրովբ Կ. Դաւթեան.
Առաքել Կ. Մ. Զօհրաբեան.
Մ. Կ. Մ. Զօրաբեան.
Յովսէփ Հ. Յովսէփջանեան.

Հոգաբարձուք Տպարանի Ամենափրկչեան սրբոյ վանուց։

## Ներածութիւն

Տեսեալ զպակասութիւն դասագրոց համառօտ պատմութեան Աստուածաշունչ սուրբ Կտակարանաց 'ի Դպրատունս կողմանցս, որով դժուարանային Աշակերտաց դասառութիւնք յայն ամենակարեւոր ուսմունս, 'ի քանի տեսակաց անտի տպագրելոց 'ի զանազան տեղիս, առ այժմ միայն պատշաճ համարեալ ընտրեցաք "զՀամառօտ Պատմութիւնն Ս. Գրոց" հեղինակութիւն Ա. Մ. Գարագաշեան զտպագրեալն 'ի Կ. Պօլիս 'ի 1873. ամի. ըստ որում օգտակար և պիտանի տեսաք զայն ըստ համառօտութեանն և հակիրճ բովանդակութեան գլխաւոր մասանց պատմութեանն: Աստուծով 'ի պահանջել հարկին զեւս ճոխագոյնս ունիմք եւս 'ի տիպ արձանացուցանել յապայս 'ի յագուրդ բազմաբաղձիկ ախորժակի զարգացելոցն և թեւակոխելոց անդր քան զհամառօտութիւնս 'ի բարձրագոյն մարզս: Ըստ յանձնելոյ մեզ Հոգաբարձու պաշտօնակցացս կամակար ստանձնեցաք զաշխատասիրութիւնս յեղլոյ զայն յաշխարհիկ բարբառոյ մերազանց Տաճկաստանի 'ի դիւրիմաց ոճ և յաշխարհաբառ լեզու Նոր Ջուղայուս յաղագս մանկանց Դպրոցացս. որ և ըստ օրէնս հարազատ թարգմանչի յամենայնի գուն 'ի գործ եդաք մի կարի փոփոխութիւն ոճոյ բանասէր Հեղինակին առնել 'ի սմին, զի մի մանտենկանն եղանակ խօսից պլակերպեսցի 'ի տարազ օտարոտի, և յիմաստս Նորին 'ի ներքս սպրդեսցին խրթնութիւն ինչ կամ այլ ընդ այլոյ առումն բուն իսկ ասացուածոցն, որ անշուշտ պախարակելին է 'ի բանադատութիւնս ուղղատեսիցն քննչաց. այլ զփոփոխումն զորս հարկեցաք առնել՝ էր յինչ ինչ բառս Տաճկաբարբառ աշխարհաբառին Ազգայնոցս, որք աստանօր դըժուարըմբռնելի լինէին ամենեցուն մանաւանդ սակս մանկանց. և 'ի վերջաւորութիւնս բառից, զորս ըստ հասարակ խօսից Նոր Ջուղայու եդաք. բայց և այնպէս յամենայնի 'ի նոսա յաւէտ ուշ կալեալ ըստ կարի մերձաւորագոյն գրաբառին առնել զսա, և 'ի պակասել ինչ ինչ բառից յաշխարհիկ լեզուս մեր՝ 'ի բուն իսկ գրաբառէն ջանացաք լրացուցանել զայնս, քան թէ ըստ սովորականին զպարսկականն և զայլ օտարազգիսն 'ի ներքս մուծանել անխտիր և խուկել անճահս :

Արդ այսչափ զեկուցեալ զաշխատակութեանց մերոց ըստ այնց մասին՝ յուսամք թէ հանդիպեսցի բարեհաճութեան Ամենասիրելի Ազգիս, և դիւրին և շահաւէտ արդիւնս ծնցի սակս մանկտեաց և չափահասից Հայրենեացս. որով զփոխարէնն համարիմք լիուլի վայելեալ Ներհուն Հեղինակին և մեք խոնարհ աշխատակից Նորին :

'ի Ջուղա 1879.<br>
'ի 19 Ապրիլ: } Առաքել Կ. Մ. Ջօհրապեանց :

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

—

Սուրբ գրոց պատմութիւնն խրատապէս դասուած է Դպրոցական ուսմանց կարգումն, ո՛չ միայն իբրև աշխարհիս ամենիցն հին և երևելի մի ազգի պատմութիւն, այլ և մանաւանդ կրօնական նկատմամբ: Հին և Նոր Կտակարանաց պատմութիւնն Աստուծոյ ժողովրդի կամ եկեղեցւոյ պատմութիւնն լինելով, պէտք չէ որ անծանօթ մնայ նոցա, որ ՚ի տղայութեան պէտք է կրթուին քրիստոնէական ուսման մէջում, որ եկեղեցւոյ ուսումն է: Առանց գիտենալոյ Սուրբ գրոց պատմութիւնն, ո՛չ միայն արտաքին և ազգային պատմութեան մէջում շատ տեղարէնք, այլ և քրիստոնէական վարդապետութիւնն անգամ անիմանալի կ՚լինի տղայոց, և շատ քրիստոնէական հաւատալիք և պարտաւորութիւն փոքր հարկաւոր և անօգուտ պիտի կարծուին նոցա:

Այս դասագիրքն կ՚պարունակի Հին և Նոր Կտակարանի պատմութեան ամենիցն հարկաւոր մասնէրն, և ջանացուած է ըստ կարևորին ամփոփ և դիւրուսանելի առնել տղայոց նորա դասէրն պարզութեամբ և համառօտութեամբ: Ո՛չ սակաւ զուարճալի պիտի առնեն այս ուսումն տղայոց՝ ութսունի չափ պատկերնէրն որ այս գրքիս (տպուածն ՚ի Կ. Պօլիս) մէջ կ՚գտանուին:

Ա. Մ. Գ.

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
# ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

## ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

ՀԱՐՑՈՒՄ. Սուրբ գիրք ասելով ի՞նչ կ՚հասկացուի:

ՊԱՏԱՍԽԱՆԻ. Սուրբ գիրք ասելով կըհասկացուին Հին և Նոր Կտակարաննէրն, որ Աստուածաշունչ ևս կ՚կոչուին, քանզի Մարգարէք և Առաքեալքն գրեցին այս գրքէրն Աստուծոյ ազդեցութեամբն:

Հ. Ինչո՞ւր համար Կտակարան կ՚ասուին.

Պ. Կտակարան կասուին. քանզի Աստուծոյ իւր ժողովրդի հետ արած կտակն, այսինքն դաշինքն և խոստումնէրն կ՚պարունակեն:

Հ. Ո՞վքեր են Աստուծոյ ժողովուրդն:

Պ. Աստուծոյ ժողովուրդն էին հին ժամանակումն Հրեայք, և Նոր ժամանակումս մասնաւոր կերպով Աստուծոյ ժողովուրդն կամ Եկեղեցին կ՚կոչուին Ճշմարիտ Քրիստոնեայք:

Հ. Հրէից պատմութիւնն Սուրբ գրոց որ մասնի մէջն է :

Պ. Հրէից պատմութիւնն Հին կտակարանի մէջն է :

Հ. Նոր կտակարանն ինչ կ'պատմի :

Պ. Նոր կտակարանն կ'պատմէ Քրիստոսի պատմութիւնն, և Առաքելոց ձեռնով հիմնուած առաջին քրիստոնէական եկեղեցւոյ պատմութիւնն :

# ՄԱՍՆ Ա.

## ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ

Հ. Հին կտակարանի պատմութիւնն քանի գլխաւոր ժամանակ կ'բաժանուի :

Պ. Հին կտակարանի պատմութիւնն կ'բաժանուի վեց գլխաւոր ժամանակ.

Ա. Աշխարհիս ստեղծուելուց մինչև Ջրհեղեղ :

Բ. Ջրհեղեղից մինչև Աբրահամու կոչումն :

Գ. Աբրահամու կոչմանից մինչև Իսրայելացւոց Եգիպտոսից ելանելն :

Դ. Եգիպտոսից ելանելուցն մինչև Հրէից Թագաւորութեան սկիզբն :

Ե. Հրէից թագաւորութեան սկզբից մինչև Բաբելոնի գերութիւնն :



Զ. Բաբելոնի գերութիւնից մինչև Քրիստոսի գալուստն :

# Ա. ԺԱՄԱՆԱԿ

## ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾՄԱՆԻՑ ՄԻՆՉԵՒ ՋՐՀԵՂԵՂ 4004 – 2348. ՆԱԽ ՔԱՆ ՔՐԻՍՏՈՍ.

Հ. Այս ժամանակի գլխաւոր դէպքերն որո՞նք են :

Պ. Այս ժամանակի դէպքերն են

1. Աշխարհի ստեղծումն.
2. Մարդու անկումն.
3. Եղբայրասպանութիւնն.
4. Մարդկանց ապականութիւնն.

### 1. ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾՈՒՄՆ 4004. Ն. Ք. ՔՐԻՍՏՈՍ.

Հ. Աշխարհս ով ստեղծեց :

Պ. Աստուած ստեղծեց աշխարհս ոչընչից իւր խօսքովն, բայց չուզեց որ ամենն մի հետ ստեղծի, այլ հետ զհետէ ստեղծեց զայն :

Հ. Աստուած որչափ ժամանակում ստեղծեց աշխարհքս :

Պ. Աստուած վեց օրումն ստեղծեց աշխարհս

հետեւեալ կարգով ։

Առաջին օրուն ստեղծեց լոյսը ։

Երկրորդ օրուն՝ երկնային հաստատութիւնը, այսինքն երկիրս պատող երկինքը ։

Երրորդ օրուն ջուրը ցամաքէն ջոկեց, և հրամայեց ցամաքին որ տունկեր և ծառեր դուրս բերէ ։

Չորրորդ օրուն ստեղծեց լուսաւորները, այսինքն՝ արեգակն, լուսին, ու աստղերն ։

Հինգերորդ օրուն ստեղծեց ձկները ու թռչունները ։

Վեցերորդ օրուն ստեղծեց ամէն տեսակ չորքոտանիներ և սողուններ, բոլորէն յետ ըստեղծեց ՄԱՐԴԻՆ ։

Հ. Աստուած մարդն ինչպէս ստեղծեց ։

Պ. Աստուած մարդն ստեղծեց հողէն, բայց նորան տուեց բանական և անմահ հոգի, որով մարդս Աստուծոյ պատկերին նման եղած կասուի ։

Հ. Աստուած քանի մարդ ստեղծեց ։

Պ. Աստուած ստեղծեց յառաջ Ադամին հողէն, և յետոյ նորա մին կողէն շինեց Եւային ։ Ադամ և Եւա մեր նախածնողներն են, այսինքն՝ բոլոր մարդոց առաջին հայրն և մայրն ։

Հ. Աստուած վեց օրուն ամէն բան ստեղծելուն յետոյ ինչ արեց ։

Պ. Աստուած վեց օրուն բոլոր արարածները ստեղծելուց յետ, եօթներորդ օրն սուրբ արեց, այսինքն պատուիրեց որ այն օրուն մարդիկ աշխարհային գործքերից դադարե-



լով, հանգստեամբ և բարեպաշտութեամբ անցկան ։ Այս օրն մեր ներկայեան կիրակին է ։

## 2. ՄԱՐԴՈՒ ԸՆԿՈՒՄՆ

Հ. Աստուած Ադամին և Եւային ստեղծելուց յետ ընդոնց ո՞ր տեղ դրեց, և նոցա ինչ պատուէր տուեց ։

Պ. Աստուած Ադամին և Եւային ստեղծելուց յետոյ ընդոնց մի գեղեցիկ պարտէզի միջում դրեց որ դրախտ կ՚կոչուի, և նոցա հրաման տուեց այն պարտէզի բոլոր պտուղներից ուտել, միայն մի ծառի պտղից պատուիրեց չուտել մահ սպառնալով ։

Հ. Ադամ և Եւայն Աստուծոյ այս պատուէրն պահեցին ։

Պ. Ո՛չ. Սատանէն օձի կերպարանքով խաբեց Եւային ասելով թէ, եթէ այն ծառի պտղից ուտեն, Աստուած պիտի դառնան ։ Եւա հաւատալով նորա խօսքին այն պտղից կերաւ, Ադամին ևս տուեց, նա ևս կերաւ ։

Հ. Ադամայ և Եւայի այս անհնազանդութեան համար Աստուած ընդոնց ինչ արեց ։

Պ. Աստուած պատիժ տուեց Ադամայ որ իւր երեսի քրտինքն ուտի իւր հացն, Եւային ևս՝ թէ ցաւով ծնանի, և ասէց թէ հող էին և հող դառնան ։ Այսպէս Աստուած մահկանացու արեց ընդոնց, որ անմահ պիտի լինէին, եթէ այն անհնազանդութիւնն արած չլինէին ։ Ա-

դամայ և Եւայի պատժոյ հաղորդ եղև Նոցա բոլոր սերունդն, այսինքն բոլոր մարդկային ազգն :

Հ. Ադամայ և Եւայի պատիժն միայն մարմնաւոր էր :

Պ. Ո՛չ. Նա և հոգևոր էր, այսինքն երբ մեղաւոր զրկուեցին Նոքա շատ հոգևոր շնորհներէն և յաւիտենական երանութենէն. մինչև որ ՔՐԻՍՏՈՍ Աստուծոյ որդին եկաւ փրկել զմարդիկ. և այժմ Նորա հաւատացող բարեպաշտ Քրիստոնեայք կարող են արքայութեան ժառանգ լինել:

Հ. Մեր Նախածնողք իւրենց անկումից յետ ինչ եղան :

Պ. Դրախտից դուրս գձուելով, սկսեցին աշխատութեամբ իւրենց ապրուստն հոգալ:

## 3. ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ 3875. Ն. Ք. ՋՔՐԻՍՏՈՍ.

Հ. Ադամ և Եւա դրախտից մերժուելուց յետ ինչ դժբախտութիւն ունեցան :

Պ. Նոքա երկու որդի ունեցան Կայէն և Աբէլ: Կայէն մշակ էր, իսկ Աբէլ՝ հովիւ: Երկուքն էլ Աստուծոյ պատարագ մատուցին: Աբէլի պատարագն ընդունելի եղև Աստուծոյ, և Կայէն սորա համար նախանձելով իւր եղբօրն, նորան դաշտն տարաւ և ըսպանեց: Աստուած անիծեց Կայէնին այս անօրէնութեան



համար և վերջապէս սպանուեց Կայէն իւր թոռից սխալմամբ :

Հ. Ադամ և Եւա ուրիշ որդի ունեցան :

Պ. Փոխանակ Աբէլի Աստուած Նոցա ուրիշ մի որդի տուեց որ կոչուեց Սէթ, և Ադամ 930. տարի ապրելով մեռաւ, էն ժամանակումն մարդիկ շատ երկար կապրէին :

## 4. ՄԱՐԴՈՑ ԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ

Հ. Ադամայ զաւակներն շատանալով ինչ եղան :

Պ. Ադամայ զաւակների մեծ մասն չար և աշխարհասէր մարդիկ դարձան, միայն Սեթայ ցեղն մնաց բարեպաշտ : Աստուածաշունչն որդիք Աստուծոյ կ'կոչէ այս բարեպաշտ ցեղին. իսկ միւս աշխարհասէրներին և չարերին կ'կոչէ Որդիք մարդկան :

Հ. Որդիք Աստուծոյ կոչուածների մէջ որոնք կ'յիշուեն անուամբ :

Պ. Որդիք Աստուծոյ կոչուածների մէջ անուամբ կ'յիշուին :

1. Ենովք որ 365. տարի ապրելուց յետոյ, Աստուծոյ շատ հաճելի լինելով՝ կենդանի կերպով վերացաւ :
2. Մաթուսաղա որ 969 տարի ապրեց, մարդկանց միջումն բոլորից շատ ապրողն սա է :
3. Նոյ որ իւր բարեպաշտութեան համար

իւր զաւակներովն ջրհեղեղիցն ազատուեց։

Հ. Որդիք մարդկան կոչուածներու մէջ երեւելիքն որո՞նք են ։

Պ. Սոցա մէջ իբրեւ երեւելի կ'յիշուի Ղամէք, կայենի Թոռն. սա է որ սխալմամբ սպանեց կայէնին ։ Ղամէքայ որդիքն ճարտար ու հնարագէտ մարդիկ էին ։ Յուբաղ հնարեց երաժշտութիւնն. Թոբէլ՝ դարբնութիւնն, Թոբէլայ քոյրն Նոյեմա՝ հնարեց ոստայնանկութիւնն ։

## Բ. ԺԱՄԱՆԱԿ

### ՋՐՀԵՂԵՂԻՑՆ ՄԻՆՉԵՒ ԱԲՐԱՀԱՄՈՒ ԿՈՉՈՒՄՆ. 2348 – 1921. Ն. Ք. ՔՐԻՍՏՈՍ

Հ. Այս ժամանակի երեւելի դէպքերն որո՞նք են ։

Պ. Այս ժամանակի երեւելի դէպքերն են 1. Ջրհեղեղ ու 2. Աշտարակաշինութիւնն ։

### 1. ՋՐՀԵՂԵՂ 2348. Ն. Ք. ՔՐԻՍՏՈՍ

Հ. Բարի և չար մարդկանց վերջն ի՞նչ եղաւ ։

Պ. Ինչպէս սովորաբար կ'լինի, բարիքն չարերի



օրինակին հետեւելով ապականուեցին, միայն Նոյ մնաց արդար իւր ընտանիքներովն ։ Եւ Աստուած տեսնելով մարդկանց ապականութիւնն ջրհեղեղով ջնջեց ընդոնց, Նոյ միայն ազատուեց ։

Հ. Նոյ ի՞նչպէս ազատուեց ջրհեղեղից ։

Պ. Նոյ Աստուծոյ հրամանով տապան (նաւ) մի շինեց, և երբ ջրհեղեղն սկսեց, Նոյ իւր կնոջով. երեք որդիքներով, և նոցա կընանիքներով. ամէն կենդանիքներից եւս մի մին և աւելի զոյգ հետն առնելով մտաւ տապանի մէջն ։ Քառասուն օր և քառասուն գիշեր անձրև գալով ջուրն երկրիս վերայ էնպէս բարձրացաւ որ տապանից դուրս մնացած բոլոր մարդիկն և անասունքն մեռան ։

Հ. Ջրհեղեղն դադարելուց յետ Նոյ ի՞նչ արեց ։

Պ. Ջրհեղեղն դադարելուց և ջրերն փոքր ինչ ցամաքելուցն յետոյ, Նոյի տապանն Հայաստանի Արարատ սարի վերայ նստեց, և վերջապէս երկիրն մի լաւ ցամաքելուց յետ, Նոյ բոլոր իւր հետն եղածներովն տապանից դուրս եկաւ, և շնորհակալութեան համար Աստուծոյ պատարագ (զոհ) մատոյց, Աստուած ընդունեց Նոյի պատարագն, և խոստացաւ այլ ևս ջրհեղեղ չածել և իւր այս խոստման նշան տուեց աղեղն (ծիրանի գօտին) որ անձրեւի ժամանակում շատ անգամ Թխպերի վերայ գոյն զգոյն կ'երևայ ։

Հ. Նոյի որդւոց անուններն որո՞նք են :

Պ. Նոյի որդւոց անուններն են Սեմ. Քամ. և Յաբեթ : Սոցանից ամէն մինն շատանալով մեծամեծ ազգեր եղան. զոր օրինակ Հրեայք՝ Սեմիցն են, Հայերն՝ Յաբեթիցն :

Հ. Քամի համար ի՞նչ կ'պատմուի :

Պ. Կ'պատմուի թէ Նոյ տապանիցն դուրս գալուց յետ այգի տնկեց, նորա խաղողիցն գինի շինեց, և գինւոյ զօրութիւնն չիմանալով՝ նորանից էնքան խմեց որ քէֆովանալով տըկլոր պառկեց : Քամ իւր Հօրն էնպէս տեսնելով՝ գնաց պատմեց միւս եղբայրներին ծիծաղելով. Նոքա մին շոր վերառնելով. և յետեւի կողմիցն գնալով ծածկեցին իւրեանց Հօր մերկութիւնն : Երբ Նոյ քէֆովութիւնից լըջանալով իմացաւ եղածն, անիծեց Քամին. բայց Սեմին ու Յաբեթին օրհնեց :

Հ. Նոյ որչափ ժամանակ ապրեց :

Պ. Նոյ ջրհեղեղիցն յետ 350. տարի ևս ապրելով, 950. տարեկան մեռաւ :

## ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԼԵԶՈՒԱՑ ԽԱՌՆԱԿՈՒԹԻՒՆ 2247. Ն. Ք. Դ.ՔՐԻՍՏՈՍ

Հ. Նոյի զաւակներն բազմանալով ի՞նչ արին :

Պ. Նոյի զաւակներն բազմանալով, Հայաստանի կողմիցն դէպ 'ի հարաւ եկան Սենաար կոչ-



ուած տեղն : Այն տեղ ուզեցին շատ բարձր աշտարակ մի շինել իւրեանց անուն առնելոյ համար : Այն ժամանակ բոլոր մարդիկ մի լեզու կ'խօսէին : Աստուած չհաճենալով մարդկանց աշտարակ շինելոյ հպարտ խորհրդին, խառնակեց նոցա լեզուն, այնպէս որ նոքա իրար չհասկանալով սկսան ցրուել երկրիս երեսի վերայ :

Աշտարակաշինութեան տեղն Բաբէլ կոչուեց որ խառնակութիւն կ'նշանակէ :

Հ. Մարդիկ երկրիս երեսի վերայ ցրուելով ի՞նչ եղան :

Պ. Մարդիկ երկրիս երեսի վերայ ցրուելով, սկսեցին փոքր առ փոքր մոռանալ Աստուծոյն, և կռապաշտութեան մէջ ընկան : Այլ և այլ բռնաւոր մարդիկ սկսեցին թագաւորութիւններ հաստատել, սոցանից մինն էր Քամայ թոռն Նեբրովթ որ Բաբելոնի մէջ հաստատեց իւր թագաւորութիւնն :

## Գ. ԺԱՄԱՆԱԿ

### ԱԲՐԱՀԱՄՈՒ ԿՈՉՈՒՄԷՆ ՄԻՆՉԵՒ ԻՍՐԱՅԷԼԱՑԻՈՑ ԵԳԻՊՏՈՍԻՑ ԵԼԱՆԵԼՆ 1921 – 1491. Ն. Ք.

Հ. Աբրահամու կոչումն առնելով ի՞նչ կ'հաս-

կացուի :

Պ . Աբրահամու կոչումն ասելով կ'հասկացուի Նորա Աստծանից կանչուելն : Աստուած մարդկանց կռապաշտութիւնն տեսնելով ուզեց իւր համար մի Աստուածապաշտ ժողովուրդ ունենալ երկրի վերայ : Ուստի Աբրահամին երեւալով ասաց . Քո Հօրդ տանիցդ դուրս ե'կ , և գնա ուր որ քեզ պէտք է ցուցանեմ, քեզ մեծ ազգ պէտք է շինեմ, և բոլոր Ազգերն քեզնով պիտի օրհնուին :

Հ . Այս խօսքերն ի՞նչ կ'նշանակեն :

Պ . Այս խօսքերն կ'նշանակեն թէ մեր Փրկիչն Քրիստոս Աբրահամի ցեղիցն աշխարհ պէտք է գայր :

Հ . Աբրահամի ցեղն ո՞րն է :

Պ . Աբրահամի ցեղն մարմնաւորապէս Հրեայք են . իսկ հոգևորապէս՝ բոլոր ճշմարիտ հաւատացեալք : Այս պատճառաւ Աբրահամ հաւատացելոց Հայր կ'կոչուի :

Հ . Աբրահամ ի՞նչպէս ազգ եղև :

Պ . Աբրահամ Աստուծոյ հրամանին համեմատ իւր հայրենիքիցն Քաղդէացւոց Ուր քաղաքիցն դուրս գալով իւր ընտանեօքն և իւր Եղբօրորդւոյ ընտանեքներովն եկաւ Քանանացւոց երկիրն զոր Աստուած Նորա ցեղին ժառանգութիւն խոստացաւ տալ, և այն տեղն սկսեց բազմանալ :

Հ . Աբրահամ և Ղովտ ի՞նչ արին Քանանացւոց երկրումն :



Պ . Աբրահամ և Ղովտ մի սովի պատճառաւ Եգիպտոս ճանապարհորդութիւն առնելուց յետ , երբ կրկին անգամ Քանանացւոց երկիրն վերադարձան , Ղովտ Նորանից բաժանուելով Սոդոմի երկիրն գնաց , քանզի երկուքն ևս շատ ոչխարներ և անասուններ ունէին . և Նոցա հովիւների մէջ կռիւ կ'պատահէր : Այն ժամանակուայ մարդկանց մեծ հարստութիւնն ոչխարներն և անասուններն էին :

Հ . Ղովտին ի՞նչ պատահեցաւ Սոդոմի երկրին մէ՞ջ :

Պ . Մի անգամ չորս Թագաւորներ Սոդոմացւոց վերայ գալով յաղթեցին Նոցա , և ժողովրդին գերի տարան , Ղովտին ևս մի տեղ . բայց Աբրահամ իմանալով զայս՝ այն Թագաւորների վերայ յարձակեցաւ , և ազատեց Ղովտին և Նորա ընտանիքներին : Աբրահամ Թագաւորի պէս մի մարդ էր , շատ մարդիկ ունէր իւր հետ : Երբ Աբրահամ յետ կ'դառնայր , հանդիպեց Մելքիսեդեկ անուամբ մի Աստուածապաշտ քահանայի , և Նորան տասանորդ տուեց : Այս Մելքիսեդեկ քահանայն ևս օրինակ էր Քրիստոսի , ճշմարիտ Քահանայապետին ( Եբր . Դ . 15 ) :

Հ . Սոդոմացիք ի՞նչպէս մարդիկ էին :

Պ . Սոդոմացիք շատ չար մարդիկ էին , և Աստուած ուզելով զնոսա պատժել , Ղովտին հրամայեց որ իւր ընտանեօքն Սոդոմացւոց

միջէն դուրս գայ։ Ղովտ դուրս գալէն յետոյ Աստուած Սոդոմ և Գոմոր քաղաքների վերայ երկնքէն կրակ ածեց ( 1828. Նախ քան ղՔրիստոս )։

Հ. Աբրահամ չիմացա՞ւ Սոդոմայ կործանումն։

Պ. Երեք հրեշտակ Աստուծոյ կողմանէ գալով նրան իմացրին որ Աստուած պիտի պատժէր Սոդոմայեցիքներին. Աբրահամ աղաչեց Աստուծոյ ներել Սոդոմայեցւոց և Գոմորայեցւոց, և Աստուած կ'ներէր նոցա, եթէ տասն արդար գտնուէր նոցա մէջ։

Հ. Աբրահամ որդի ունէ՞ր։

Պ. Աբրահամ Իսմայէլ անուամբ մի որդի ունէր իւր Հագար անուամբ աղախնից, քանզի նորա իսկ կինն Սառա ամուլ էր։ (Այն ժամանակում Աստուած հրամանատուած էր մարդկանց մէկից աւելի կին ունենալ։) Աբրահամի մօտ եկող այն երեք հրեշտակներն աւետիս տուին Աբրահամին թէ մի որդի պիտի ունենայր իւր իսկ Սառա կնոջից։ Եւ արդարև Սառա, ծեր էր, մի որդի ունեցաւ, որ Իսահակ կոչուեց, և եղև Աբրահամի իսկ ժառանգն։

Հ. Իսահակայ վերայ յիշելու արժանի ի՞նչ բան կայ։

Պ. Աբրահամ շատ կ'սիրէր Իսահակին, և Աստուած նորա հնազանդութիւնն փորձելոյ համար ( 1872 Ն. Ք. ) հրամայեց իւր որդին զոհել։ Աբրահամ իսկոյն հնազանդեց,



և առանձին մի տեղ տարաւ զԻսահակն զոհ մատուցանելու, բայց Աստուած չթողեց, և նորա փոխարէն մի ոչխար զոհել տուեց։ Իսահակ օրինակ էր Քրիստոսի որ խաչի վերայ զոհուեցաւ մարդկանց փրկութեան համար։

Հ. Այս դէպքէն յետ ի՞նչ պատահեց։

Պ. Այս դէպքէն փոքր ժամանակ յետ Սառա մեռաւ ( 1860 Ն. Ք. ) 127. տարեկան։ Աբրահամ մինչև այն ժամանակ մի ձեռնի չափ գետին չունէր Քանանացւոց միջումն, նորա անթիւ հօտերն բաց տեղերում կարածէին։ Երբ Սառա մեռաւ. Աբրահամ Քանանու երկրի ազգերի միջէն, Քետացիքներից գերեզմանի համար Մակփելայի դաշտն գնելով, այն տեղ մի շքափոսի մէջ թաղեց Սառային։

Հ. Սառայի մեռնելուց յետոյ Աբրահամ ի՞նչ արեց։

Պ. Սառայի մեռնելուց յետ ուզելով Աբրահամ ամուսնացուցանել զԻսահակ, և չկամելով աղջիկ առնել Քանանացւոցից, իւր Եղիազար ծառային ուղարկեց Միջագետքն իւր ազգականների մօտ, և այն տեղից իւր հօրեղբօր որդւոյն Բաթուէլի աղջիկ Ռեբեկէն բերել տուեց։ Իսահակ Ռեբեկայի հետ ամուսնանալով ( 1857. Ն. Ք ) երկու որդի ունեցաւ Եսաւ և Յակոբ։ Իսկ Աբրահամ 175. տարեկան մեռաւ։

Հ. Եսաւ և Յակոբ ինչ բնաւորութեան տէր էին :

Պ. Եսաւ մոլեգ և վայրագ էր և որսորդութիւն կ'առնէր · իսկ Յակոբ փափուկ և ընտանի էր , և հօր հօտերն կարածացնէր : Բայց Իսահակ կ'սիրէր Եսաւին , Յակոբ ևս մօրն սիրելի էր : Մի անգամ Յակոբ ոսպնաթան էր եփած · Եսաւ որսի տեղէց դուրսն գալով ոսպիցն ուզէց ուտել , Յակոբ նրան ասէց , ոսպիցն քեզ կ'տամ , եթէ անդրանկութիւնդ ինձ վաճառես : Եսաւ յանձն առէց այս դաշինն և ոսպիցն կերաւ :

Շատ տարի անցկացան և Իսահակ ծերացաւ էնպէս որ չէր տեսնել : Մի օր ասէց Եսաւին , գնա ինձ համար մի որս բեր ուտեմ , և քեզ օրհնեմ : Ռեբեկա այս լսելով , և ուզելով որ Յակոբ առնի օրհնութիւնն , շուտով ուլ եփէց և տուէց Յակոբին որ հօր համար տանի : Յակոբ ևս Մօր խօսքին անսալով գնաց Հօր մօտն , և՝ Եսաւն եմ , ասելով ուտացրէց ուլերն իւր Հօրն և առէց օրհնութիւնն : Երբ Եսաւ գալով իմացաւ Եղբօր արածն , շատ բարկացաւ և մտքումն դրէց նրան սպանել Հօր մեռնելուցն յետոյ :

Հ. Յակոբ իւր Եղբօր վրէժխնդրութիւնիցն ազատուելու համար ինչ արէց :

Պ. Իւր մօր խորհրդովն գնաց ( 1760 · Ն · Ք · ) Միջագետք Խառան քաղաքն իւր մօրեղբօր Լաբանու մօտն , և այն տեղ քանի տարի մնա-



լով · Լաբանու երկու աղջիկներն Լիային և Ռաքէլին իւր կին առնելով · զաւակներ և շատ հարստութիւն ստանալուց յետ դարձաւ իւր հօր մօտ :

Հ. Յակոբ ինչ տեսիլքներ տեսաւ :

Պ. Յակոբ երկու խորհրդաւոր տեսիլք տեսաւ : Մէկն Խառան գնացած ժամանակումն · միւսն ևս Խառանիցն վերադարձած ժամանակումն : Խառան գնացած ժամկումն գիշերն քնի միջում տեսաւ մի սանդուղ որոյ մի ծայրն գետնումն էր , միւսն մինչև երկինքն կ'համնէր և հրեշտակներն վերև կ'գնային և վար կ'գային նրայ վերայ , սանդղի վերևի ծայրումն կանգնած էր Աստուած · որ նրան մեծամեծ խոստմունք արէց : Խառանից յետ դարձած ժամանակումն ևս նոյնպէս մի գիշերում քնոյ մէջ մինչև առաւօտ կ'ռուեցաւ մի մարդոյ հետ , որ յաղթուելով Յակոբիցն՝ օրհնեց նրան , և նմա Իսրայէլ անունն տուէց որ աստուածազօր կ'նշանակի : Այնուհետև Յակոբ Իսրայէլ ևս կոչուեց . և նորա զաւակներն կոչուեցին Իսրայէլացիք , որ յառաջ քան զԱբրահամ Եբրայեցիք կ'կոչուէին :

Հ. Եսաւ չիմացաւ Յակոբի գալն :

Պ. Յակոբ շատ կ'վախենէր Եսաւիցն , ուստի նորա սիրտն առնելու համար շատ ընծայք ուղարկելով նրան իմացրէց իւր գալն , և երբ երկուքն միմեանց հանդիպեցին , Յակոբ մեծ խոնարհութեամբ վարուեցաւ Եսաւի հետ ,

47261

եօթն անգամ գետինն ընկամնելով նրան երկրպագութիւն արեց, Աստուած ևս շարժեց Եսաւի սիրտն, և երկու եղբարք հաշտուեցին իրարու հետ ։

Հ. Յակոբ քանի՞ որդի ունեցաւ ։

Պ. Յակոբ տասն երկու որդիք ունեցաւ, որոց անուանները են՝ Ռուբէն, Շմաւոն, Ղևի, Յուդա, Դան, Նեփթաղիմ, Գադ, Ասեր, Իսաքար, Զաբուղոն, Յովսէփ և Բենիամին ։ Սոցա վերջին երկուքն Յովսէփ և Բենիամին Ռաքելից էին, որոնց շատ կ՚սիրէր Յակոբ ։

Հ. Յովսէփի վերայ ինչ կ՚պատմուի ։

Պ. Յակոբ միւս որդիքներից աւելի կսիրէր Յովսէփին, և նորա համար մի ծաղկեայ պատմուճան շինած էր։ Այս պատճառով եղբայրները նախանձելով կ՚ատէին Յովսէփին ։ Մին անգամ Յովսէփ իւր տեսած երկու երազներն պատմեց իւր եղբայրներին ։ Նրտեմնէի որ, ասէց, դաշտի վերայ որայ կ՚կապէինք, և ձեր որայներն կանգնելով իմ որայիս երկրպագութիւն արին,, ։ ,,Դարձեալ տեսայ որ, ասէց, արեգակն, լուսինն, ու տասն և մի աստղ ինձ երկրպագութիւն արին,, ։ Սորա վերայ եղբայրներն աւելի ևս ակսեցին ատել Յովսէփին ։ Մի անգամ Յովսէփի եղբայրները մի հեռու տեղ գնացած էին իւրեանց ոչխարներն արածելու. և երբ յետացան, Յակոբ ուղարկեց Յովսէփին գնալ լուր բերել եղբայրներից ։ Յովսէփ գնաց գտաւ իւր



եղբայրներին, նոքա ևս ուզեցին նախ նրան սպանել, յետոյ մի խորի մէջ գձեցին, և ապա այն տեղից ևս հանելով վաճառեցին զնա Իսմայէլացի վաճառականներին, որ Եգիպտոս տանելով զՅովսէփ վաճառեցին Փարաւոն Թագաւորի դահճապետին Պետափրէսին ։ Բայց Յովսէփի եղբայրներն Յովսէփի պատմուճանն այծի արնի մէջ թաթախելով տարան իւրեանց հօր համար, որ կարծելով թէ գազաններ կերած են Յովսէփին, մեծ սուգ արեց նորա վերայ ( 1729 . Ն . Ք ) ։

Հ. Յովսէփ Եգիպտոսի մէջ ինչ եղև ։

Պ. Յովսէփ շատ սիրելի եղև Պետափրէսին, բայց յետոյ զրպարտուելով նորա կնոջից բանտ դրուեց ։

Հ. Յովսէփ բանտից ինչպէս ազատուեց և ինչ եղև ։

Պ. Փարաւոնի տակառապետն ու մատակարարն յանցանքի համար բանտ դրուելով երազ տեսան ։ Յովսէփ մեկնեց նոցա երազն . և նորա տուած մեկնութեան պէս մատակարարն գլխատուեցաւ, տակառապետն ևս ազատուելով իւր առաջին պաշտօնին հասաւ ։ Մի քանի տարուց յետոյ Փարաւոն երազներ տեսաւ, և երբ Եգիպտոսի գիտունները չկարողացան մեկնել նորա երազները, տակառապետի խորհրդովն Յովսէփ կանչուեց բանտից, և մեկնեց Փարաւոնի երազն՝ ասելով թէ եօթն տարի առատութիւն կ՚լինի, յետոյ եօթն

տարի ևս սով։ Փարաւոն տեսնելով Յովսէփի իմաստութիւնն՝ նրան իւրն երկրորդ շինեց, և բոլոր Եգիպտոսի երկրի կառավարութիւնն նրան յանձնեց (1716 . Ն. Ք.)։

Հ. Փարաւոնի երազներն ինչպէս կատարուեցան։

Պ. Յովսէփի ասածի պէս։ Յովսէփ առատութեան տարիքներումն շատ ցորեն ժողովելով պահեց։ Երբ սովն բոլոր երկրի վերայ սաստկացաւ, ամէն կողմից մարդիկ կ'գային Եգիպտոս ցորեն գնելու։ Յովսէփայ եղբայրներն ևս եկան բաց 'ի Բենիամինից։

Հ. Յովսէփ իւր եղբայրներին ինչ արեց։

Պ. Նոքա չճանաչեցին Յովսէփին, բայց Յովսէփ զնոսա ճանաչելով խոժոր վարուեցաւ նոցա հետ, և Շմաւոնին իւր մօտն պահելով միւսներին ուղարկեց ցորենով, պատուիրելով որ վերադառնալուն իւրեանց փոքրիկ եղբօրն Բենիամինին ևս մի տեղ բերեն։ Երբ նոքա երկրորդ անգամ Եգիպտոս եկան Բենիամինի հետ, Յովսէփ իւրն յայտնեց նոցա և ուղարկեց ընդոնց որ իւր Յակոբ Հօրն Եգիպտոս բերեն։

Հ. Երբ Յակոբ Յովսէփի ողջ լինելն իմացաւ ինչ արեց։

Պ. Ուրախութեամբ իւր բոլոր ընտանեօքն ճանապարհ ընկնելով եկաւ Եգիպտոս, ուր (1706 . Ն. Ք.) հրամանաւ Փարաւոնի բընակուեց Գեսեմ կոչուած տեղն, ուր և մե-



ռաւ 147 . տարական, մարգարէանալով որ Քրիստոս մեր փրկիչն աշխարհք պիտի գէր Յուդայի ցեղից։ Յովսէփ մեծ սուգ կատարելով իւր հօր վերայ, և պատել տալով նորա մարմինն Եգիպտացւոց սովորութեան համեմատ, մեծ պատուով տարաւ թաղեց զնա Քանանու երկրում Մակփելայի այրումն։

Հ. Եգիպտոս ինչպէս երկիր է։

Պ. Եգիպտոս 2. կամ 3. մղոն լայնութեամբ հովիտ է, որոյ միջից կանցանի Նեղոս գետն։ Նեղոս զանազան ճիւղեր բաժանուելով, եռանկիւնի ձևով կ'թափի Միջերկրական ծովըն։ Եգիպտոսի այս մասին արևելեան կողմն էր Գեսեմ ուր բնակուեցին Իսրայելացիք։

Հ. Եգիպտացիք ինչպէս ժողովուրդ էին։

Պ. Եգիպտացիք այն ժամանակումն աշխարհիս ամենից լուսաւորեալ ազգն էին։ Նոքա տեղեակ էին աստեղագիտութեան, գիտէին արեգակնային տարին, խաւարմանց ժամանակներն, և մոլորակների և հաստատուն աստեղաց տարբերութիւնն։ Հմուտ էին նաև բժշկութեան, նաւուղղութեան այլ և այլ ազատական և մեքենական արուեստների, մանաւանդ ճարտարապետութեան։ Բաց 'ի բուրգերից և արձաններից, երևելի են Աբիսի մեհեանն Մեմփիսի մօտ, և ուրիշ մի մեհեան Թեբէի մօտ 16. կարգ սիւներով, որոնցից միմինն 72. ոտք բարձր են և 11. ոտք լայն են։ Եգիպտացիք

չաքան իմաստուն և հնարագէտ լինելով՝ կռապաշտ էին. ընդ հակառակն տգէտ Իսրայէլացիք ունէին ճշմարիտ Աստուծոյ գիտութիւնն ։ Բայց սոքա ևս փոքր առ փոքր իւրեանց Աստուածպաշտութիւնն մոռանալով, Եգիպտացւոց կռապաշտութեան մէջ պիտի ընկնէին, եթէ Աստուած զնոսա Եգիպտացւոց միջէն հանած չլինէր ։

Հ. Եգիպտացւոց սովորութեան համեմատ մի մեռած պատուել ինչ կ՚նշանակէր ։

Պ. Եգիպտացիք սովորութիւն ունէին մեռածների մարմինները զմռսելով դնել շքաւտների մէջ ։ Այսպէս զմռսեալ կամ պատեալ մարմինները մինչև ցարդ կ՚գտնուին Եգիպտոսի մէջ և մումիայ կ՚կոչուին ։ Այս կերպով պատիւ տուեց Յովսէփ իւր հօր մարմնին. Յովսէփի մարմինն ևս նոյնպէս պատելով պահեցին Իսրայէլացիք և Եգիպտոսից դուրս գալու ժամանակումն մի տեղ տարան Քանանացւոց երկիրն, ինչպէս որ Յովսէփ նոցանից խնդրած էր ։

Հ. Յակոբի մահուանից յետ նորա սերունդն ինչ եղև ։

Պ. Յիսուն տարուց յետոյ մեռաւ Յովսէփ 110. տարեկան, և Եգիպտացիք սկսեցին նեղացնել Իսրայէլացւոց՝ քարպիճ կտրել տալով նոցա. և տեսնելով որ նոքա դեռ կ՚շատանային, այն ժամանակուայ Փարաւոն թագաւորն հրամայեց գետն գձել նոցա նոր ծն-



ուած արու տղայքն ։ Այսպէս գետն գձուած տղերքներիցն մինն էր Մովսէս ։

Հ. Մովսէս ով է ։

Պ. Մովսէս (1550. Ն. Ք.) այն մեծ Մարգարէն է որ Իսրայէլացւոց Եգիպտոսից ազատեց, Մովսէսի ծնողքն նորան ճլով գործած ղուլթկի մէջ դնելով, Փարաւոնի հրամանին համեմատ Նեղոս գետն գձեցին, և Մովսէսի քոյրն հեռի կանգնած տխրութեամբ կ՚նայէր թէ ինչ պիտի լինէր տղայն ։ Փարաւոնի աղջիկն որ այն միջոցումն գետի եզերքն եկած էր լուացուելու՝ տեսնելով ղութիկն հրամայեց հանել ջրից, և տղայն հանելով իւրն որդեգիր արեց ։ Մովսէս Փարաւոնի պալատի մէջ կրթուելով մեծանալուց յետոյ իմացաւ իւր Իսրայէլացի լինելն, և մի օրում տեսնելով որ մի Եգիպտացի մի Իսրայէլացի մարդի կ՚թակէր, բարկանալով սպանեց Եգիպտացուն, և վախենալով Փարաւոնից, քանզի իմացուեց նորա արած սպանութիւնն, Արաբիոյ անապատն փախաւ Մադիանացւոց քուրմի մօտ, և նորան փեսայացաւ ։

Հ. Մովսէս ինչ կերպով ազատեց Իսրայէլացւոց Եգիպտոսից ։

Պ. Մի անգամ Արաբիոյ Քորեբ սարումն հովուուն արած ժամանակումն, տեսաւ որ մի մորենի կ՚վառուէր բայց չէր այրուել ։ Երբ Մովսէս զարմանալով կ՚նայէր, Աստուած մորենու միջից խօսեց նորա հետ և հրամայեց գոր-

ծերոյ պզրութեան տալով նրան, ուղարկեց որ իւր եղբայրներին Իսրայէլացւոց Եգիպտոսից հանելով աւետեաց (Քանանու) երկիրն տանի :

Մովսէս գնաց և խնդրեց Փարաւոնից արձակել Իսրայէլացւոց : Փարաւոն սկզբումն չուզեց արձակել Իսրայէլացւոց, բայց Աստուած Մովսէսի ձեռնովն Եգիպտացւոց վերայ սոսկալի հարուածներ բերելուց յետոյ, երբ մի գիշերուայ միջում նոցա բոլոր անդրանիկներն ջարդուեցին, Փարաւոն պարտաւորուեց թողնել Իսրայէլացւոց ( 1491 ) Ն. Ք. ) :

Հ. Աստուած ինչպէս ջարդեց Եգիպտացւոց անդրանիկներին :

Պ. Աստուած Իսրայէլացւոց հրամայեց որ իւրաքանչիւր տունն մի գառնուկ առնէ և մորթելով զայն նորա արիւնն իւրեանց տների դռների շեմքերի վերայ քսեն, որ Եգիպտացւոց անդրանիկներն ջարդող հրեշտակն տեսնելով արիւնն՝ չջարդի Իսրայէլացւոց անդրանիկներին : Այս է Զատիկ կամ Պասեք կոչուած հրէական տօնի սկիզբն : Հրեայք ամէն տարի այս տօնին մի գառնուկ մորթելով կ'խորովէին և կուտէին երբև յիշատակ իւրեանց ազատութեանն Փարաւոնի ծառայութիւնից, և այս մորթուած գառնուկն օրինակ էր մեր Փրկչին Քրիստոսի, որ մեզ իւր արեամբն փրկելու համար Խաչին վերայ մեռաւ :



Հ. Իսրայէլացիք Եգիպտոսից դուրս գալով ուր գնացին :

Պ. Իսրայէլացիք Եգիպտոսից դուրս գալով եկան Կարմիր ծովի եզերքն : Փարաւոն նոցա արձակելոյ համար զղջալով նոցա յետևից եկաւ իւր զօրքովն : Այն ժամանակումն Մովսէս իւր գաւազանն տալով Կարմիր ծովին՝ ճանապարհ բացաւ, և Իսրայէլացիք նորա միջովն գնալով անցկացան : Երբ Եգիպտացիք ևս նոցա յետևից ներս մտան, ջրերն միացան, և Եգիպտացիք խեղդուելով կորան :

Հ. Իսրայէլացիք Կարմիր ծովից անցկալով ուր տեղ եկան :

Պ. Իսրայէլացիք Կարմիր ծովից անց կալով Արաբիոյ անապատն եկան, և Աստուած ցերեկներն ամպէ սիւնով, և գիշերներն հրեղէն սիւնով ճանապարհ կ'ցուցանէր նոցա՝ մինչև որ հասան Աւետեաց երկիրն :

Հ. Անապատին մէջ Իսրայէլացւոց ինչ երևելի դէպքեր պատահեցին :

Պ. Առաջին երևելի դէպքն էր Մանանայն. Անապատն որոյ միջովն Իսրայէլացիք անցկային՝ անբեր և անջուր երկիր էր այն տեղ ոչ ծառ կէր, ոչ աղբիւր, ոչ գետ : Աստուած նոցա կերակուր տուեցուելու համար, այս բոլորգնձին նման մեղրահամ նիւթ էր, և հրաշքով երկնքից վեր կ'գէր ամէն օրում : խմելու համար ևս շատ անգամ հրաշքով ջուր կ'տէր

Նոցա Աստուած։ Մի անգամ նոքա մի ջրի մօտ եկան որ շատ դառն լինելով չէր խմուել. Աստուած Մովսէսին մի ծառ ցոյց տալով, որ ջրին մէջ գնուելով քաղցրացրեց ջուրն։ Մի ուրիշ անգամ ևս Մովսէս իւր գաւազանն մի քարի տալով ջուր բղխացրեց ։

Երկրորդ երևելի դէպքն էր Ամաղէկացւոց յանդիման կռիւն Ամաղէկացիք մի Արաբացի ժողովուրդ էին, և տեսնելով Իսրայէլացւոց բազմութեամբ գալն յարձակուեցին նոցա վերայ, և Մովսէս իւր զօրավարն Յեսուին նոցա վերայ ուղարկելով, ինքըն սկսեց բազկատարած աղօթք անել։ Երբ Մովսէս ձեռներն կ'բարձրացնէր, Իսրայէլացիք կ'զօրանային, երբ վաստակելով ձեռներն կ'քաշացնէր, Ամաղէկացիք կ'զօրանային, ուստի Ահարոն և Ովր Մովսէսի կռներն բարձրացրած պահեցին մինչև որ Ամաղէկացիք յաղթուեցին ։

Երրորդ և բոլորեցն երևելի դէպքն էր Սինա սարեցն տուած օրէնքն։ Երբ Իսրայէլացիք Արաբիոյ անապատի միջումն Սինա կոչուած սարի մօտ հասան, այն տեղ Աստուած տուեց նոցա Մովսէսի ձեռնով տասնաբանեայ պատուէրներն երկու տախտակների վերայ և ուրիշ քաղաքային և ծիսական օրէնքներ ։

Երբ Մովսէս այս օրէնքներն ընդունելու համար Սինա սարն գնացած էր Աստուծոյ մօտ, ուր մնաց քառասուն օր։ Իսրայէլա-



ցիք մի ոսկէ հորթ շինեցին ( հաւանականաբար Եգիպտացւոց պաշտած Ապիսի նման ) և պաշտեցին բայց Մովսէս սարեցն վէր գալով բարկացաւ նոցա վերայ, և այն կուռքն վէր առեց մէջ տեղեցն ։

Հ. Աստուծոյ Իսրայէլացւոց տուած քաղաքային օրէնքներն ինչ բաների վերայ էին ։

Պ. Այս օրէնքներն էին ընկերական կենաց յարաբերութեանց վերայ, զոր օրինակ ծնողաց և ընկերաց պաշտպանութեան, տան և կնոջ, ծնողաց և որդւոց, տերանց և ծառայից պարտաւորութիւններ, ամուսնութեան, պաշտանց, երկրի մշակութեան, և ուրիշ սոցա նման բաների վերայ ։

Հ. Աստուծոյ տուած ծիսական օրէնքներն ինչ բաների վերայ էին ։

Պ. Աստուծոյ Իսրայէլացւոց տուած ծիսական օրէնքներն էին կրօնական պաշտամունքների վերաբերեալ բաների վերայ, զորօրինակ՝ զոհերի, տարեկան տօների, շաբաթ օրի, քահանայից օծութեան, նոցա զգեստների, պաշտօնների, և ուրիշ արարողութեանց վերայ։ Աստուած մի քահանայական ցեղ ևս որոշեց այսինքն Ղևեայ ցեղը, որոց պէտք էր լինէին կրօնքի բոլոր պաշտօնեայք, և առաջին քահանայապետն եղև Ահարոն Մովսէսի եղբայրն ։

Հ. Իսրայէլացւոց տարեկան տօներն որոնք էին։

Պ. Իսրայէլացւոց տարեկան տօներն երեք էին Զատիկ կամ Պասեքի տօնն՝ 'ի յիշատակ Եգիպտոսից դուրս գալոյն, Պենտեկոստէի տօնն՝ 'ի-

յիշատակ Սինէական օրէնք գնելոյն, և Տաղաւարահարաց տօնն :

Իսրայէլացիք ուրիշ մի մեծ տօն ևս ունէին որ Քաւութեան տօն կ'կոչուէր. այն օրն Քահանայապետն կ'մտանէր Սրբութիւն Սրբութեանց կոչուած տեղը և իւր և Ժողովրդի մեղաց համար արեամբ քաւութիւն կ'առնէր, այս նշան էր Քրիստոսի պատարագին մարդկանց մեղքերի թողութեան համար :

Հ. Իսրայէլացիք հրապարակական պաշտօն մատուցանելու համար ինչ տեղ ունէին :

Պ. Մովսէս Աստուծոյ հրամանով խորան, այսինքն մի վրան շինեց, որ քանի մի մասն կ'բաժանուէր : Ամենից ներքին մասն կ'կոչուէր Սրբութիւն սրբութեանց, ուր կէր մի Տապանակ վերէն Քերովբէներով, այս տեղ Քահանայապետն միայն կ'մտանէր տարին մի անգամ: Նորա դուրսի կողմն էր Սրբութիւն կոչուած տեղը, ուր էր խունկ մատուցանելոյ Սեղանն, և Աշտանակ : Այս տեղ կ'մտանէր Քահանայապետն ամէն օր խունկ ծխելու : Սրանից դուրս կէր մի Սրահ վարագուրներով բաժանուած Սրբութիւնից, այս սրահին մէջ էր ողջակիզի սեղանն ուր Քահանայք զոհ կ'մատուցանէին :



# Դ. ԺԱՄԱՆԱԿ

## ԵԳԻՊՏՈՍԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒՑ ՄԻՆՉԵՒ ՀՐԷԻՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲՆ

Հ. Իսրայէլացիք անապատի մէջ միշտ հնազանդ էին Աստուծոյ :

Պ. Նոքա շատ անգամ մոռանալով Աստուծոյ բարերարութիւններն, և յիշելով Եգիպտոսի մէջ իւրեանց կերած սոխն, սխտորն, կ'տրտնջէին Աստուծոյ և Մովսէսի դէմ: Մի անգամ մանանայէն ձանձրանալով միս ուզեցին, և Աստուած նոցա լորամարգի տուեց, բայց տրտնջողներն պատժուեցին : Մի ուրիշ անգամ Մովսէս մարդիկ ուղարկեց Քանանացւոց երկիրն լրտեսելու, նոքա վատ լուր բերին այն երկրի վրայ, և ժողովուրդն վախենալով ուզեց յետ դառնալ Եգիպտոս, բայց տրտնջողների բոլորքն ևս անապատի մէջ մեռնելով աւետեաց երկիրն չկարողացան մտանել, բաց 'ի Յեսուէն և Քաղէբէն: Ուրիշ մի անգամ ևս մի քանի անձինք՝ Կորխ, Դաթան և Աբիրոն ապստամբելով Մովսէսի և Ահարոնի դէմ՝ ուզեցին քահանայութիւն առնել, և երկիրն բացուելով կուլ տուեց նոցա իւրեանց մարդիկներովն :

Մովսէս ժողովրդին իմացնելու համար որ Աստուած Ահարոնի ցեղի քահանայութիւնն կուզի, տասն երկու գաւազանների վրայ Իսրայէլի տասն երկու ցեղերի անուններն գրելով, Աստուծոյ տապանակի առաջին դրեց։ Հետեւեալ օրն տեսնուեց որ Ահարոնի գաւազանն ծաղկելով պտուղ էր տուած։

Դարձեալ ուրիշ մի անգամ տրտնջեց ժողովուրդն հացի և ջրի համար, և սկսան տանջուել օձերից որոնց Աստուած նոցա վրայ ուղարկեց։ Իսկ Մովսէս Աստուծոյ հրամանովն պղնձէ մի օձ կանգնեցրեց, որի ականողն կ'բժշկուէր։ Այս բժշկող պղնձէ օձն խաչեալ Քրիստոսին կ'նշանակէր (Յովհ. գ. 14)։

Հ. Մարդասպանների համար Մովսէս դիտողութեան արժանի ի՞նչ օրէնք դրեց։

Պ. Հին ժամանակումն Հրէից և ուրիշ ազգերի մէջ ևս մի սպանուողի ազգականներն մարդասպանն մեռցնելու իրաւունքն ունէին՝ առանց քննելու թէ սպանութիւնն կամաւ թէ ակամայ էր եղած։ Մովսէս պատուիրեց Իսրայէլացւոց մարդասպանների ապաւինութեան համար մի քանի ապաստանի քաղաք որոշել։ Երբ մի սպանող այն քաղաքների մէկի մէջն կ'փախնէր, կազատուէր սպանուածի ազգականների ձեռնից, բայց այն տեղ քննութիւններ կ'լինէին, և եթէ սպանութեան դիտմամբ և կամաւ եղած լինելն իմացուէր, մարդասպանն կ'պատժուէր լա-



օրինաց, ապա թէ ոչ ազատ կ'թողնուէր։

Հ. Իսրայէլացիք խաղաղութեամբ հասա՞ն Քանանացւոց երկիրն զոր Աստուած նոցա խոստացած էր։

Պ. Ո՛չ. Նոքա իւրեանց ճանապարհորդութեան ժամանակումն շատ անգամ պատերազմներ ունեցան Արաբացի ցեղերի հետ, որ էին Եդոմայեցիք, Ամաղէկացիք, Մադիանացիք, Մովաբացիք և Ամմոնացիք։

Հ. Մովաբացիք ի՞նչ արին Իսրայէլացւոց։

Պ. Մովաբացւոց Բաղակ թագաւորն՝ Բաղաամ անուամբ մի մարգարէ կանչեց որ անիծէ Իսրայէլի որդիներին։ Երբ Բաղաամ այգիքների մէջ տեղից մի նեղ ճանապարհով կանցանէր, հրեշտակ մի եկաւ նորա հանդէպ։ Բաղաամ յառաջ չտեսաւ հրեշտակին, բայց էշն որի վրայ Բաղաամ նստած էր՝ վախենալով կացաւ։ Բաղաամ կ'թակէր էշին որ գնայ, և էշն մարդի պէս խօսելով յանդիմանեց նրան, այն ժամանակն Բաղաամ ևս հրեշտակին տեսնելով՝ նրանից պատուէր ստացաւ Իսրայէլացւոց օրհնել։ Բայց Իսրայէլացիք Մովաբացւոց Բէլփեգոր անուամբ կուռքին պաշտեցին, և 24. հազար հոգի սպանուեցին սրից և ժանտախտից։

Հ. Այն ժամանակներն աշխարհի վրայ բաց Իսրայէլացիներից ուրիշ աստուածպաշտներ չկայի՞ն։

Պ. Կային, զորօրինակ Յոբ և նորա բարեկամ-

ներն, որ հաւանականաբար Մովսէսի ժամա-
նակում կ'ապրէին Արաբիոյ մէջ։

Հ. Յոբ ո՞վ էր և նորա վերայ ինչ կ'պատմուի։

Պ. Յոբ (1520, Ն. Ք) շատ հարուստ, միան-
գամայն շատ բարեպաշտ մի մարդ էր Արաբիոյ
միջնում, ունէր նա և շատ որդի և աղջիկ
զաւակներ։ Սատանէն նախանձելով այս մար-
դի վերայ չարախօսեց վասն նորա Աստուծոյ՝
ասելով թէ Յոբ յաջողութեան մէջ լինե-
լով բարեպաշտ կ'ձևանէր, եթէ ձախոր-
դութեան մէջ ընկանէր, կ'մոռանէր Աստ-
ուծոյն, Աստուած սատանային յանդիմա-
նելու համար՝ նորան թոյլ տուեց Յոբայ վե-
րայ ամէն տեսակ ձախորդութիւն բերել։
Յոբ իւր զաւակներն և բոլոր հարստու-
թիւնն կորցնելով, խոցով և վէրաւոր աշ-
խալանոցների մէջ կ'նստէր, բայց իւր վս-
տահութիւնն երբէք չվերացրեց Աստծանից,
Յոբայ երեք բարեկամներն նորան այցելու-
թիւն գալով, և վերջին թշուառութեան
մէջ տեսնելով նորան կարծեցին թէ այն ձա-
խորդութիւններն պատիժ էին Աստծուց նո-
րա մեղքի համար, բայց Աստուած յանդի-
մանեց նոցա, և յառաջին ունեցածների կր-
կինն տուեց Յոբին։ Յոբ սքանչելի օրինակ
է աստուածպաշտութեան և համբերու-
թեան. (Յակ. Ե. 11)։

Հ. Իսրայէլացիք Քանանու երկրին ինչպէս տի-
րեցին.



Պ. Մովսէս և Ահարոն անապատի մէջ մեռած
էին, ուստի և Յեսու, Մովսէսի յաջորդն
Քանանացւոց ազգերին յաղթելով, Իսրայէ-
լացւոց բաժանեց նոցա երկրներն։

Հ. Քանանացւոց ազգերն որո՞նք էին։

Պ. Բաց 'ի Փիւնիկեցիներէն և Փղշտացիներէն որ
Միջերկրական ծովի եզերքում կ'բնակուէ-
ին, Քանանացւոց մնացեալ ազգերն էին՝ Քե-
տացիք, Յեբուսացիք, Ամորհացիք, Գերգեսացիք,
և Խեւացիք։

Հ. Յեսու ինչ երևելի գործքեր արեց։

Պ. Յեսու նախ հրաշքով բաժանեց Յորդանան գետն
որի միջովն Իսրայէլացիք ցամաքով անց կա-
ցան, ինչպէս որ քառասուն տարուով յառաջ
Մովսէսի ժամանակում կարմիր ծովիցն անց-
կացած էին։ Նոյնպէս հրաշքով կործանեց Ե-
րիքով. որ Քանանացւոց բոլորիցն երևելի քա-
ղաքն էր՝ ջարդեց նորա բնակիչներին՝ բաց
'ի Ռախաբ անուամբ մի կնոջից որ Յեսուի լր-
տեսներին ծածուկ փախցրած էր։ Ուրիշ
անգամ մի կռուի ժամանակում. երբ մօտ էր
երեկոյ, լինելն Յեսու արեգակին ու լուսնին
հրամայեց մինչև որ Իսրայէլացիք իւրեանց
թշնամեացն յաղթեցին։ Այս բոլոր բաներից
յետ Յեսու Քանանացւոց երկրի մեծ մասն
Իսրայէլացւոց տասն երկու ցեղին բաժանե-
լով մեռաւ։

Հ. Ո՞ր ժողովուրդն է որ Յեսուին խաբելով
հետն դաշին գրին և կոտորածից ազատուե-

ցին ։

Պ. Քանանացւոց երկրի մէջ Գաբաւոն անուամբ մի քաղաք կար. սորա բնակիչներէն ոմանք երբոր պատգամաւոր եկան Յեսուի մօտ և հեռու տեղէն եկած ձևանալով, խաբեցին Յեսուն և նորա հետ բարեկամութեան դաշինք դրին ։ Յեսու յետոյ իմացաւ նոցա խաբէութիւնն, բայց երդմի համար նոցա վնաս չտուեց, բայց Գաբաւոնացիք Իսրայէլացւոց փայտ կտրող և ջուր բերող ծառայք դարձան ։

Հ. Իսրայէլացիք Յեսուի մեռնելուց յետ ինչպէս կառավարուեցին ։

Պ. Յեսուի մեռնելուց յետ մինչև Թագաւորութեան ժամանակն ( 1450 – 1100 Ն. Ք. ) իբր 350 տարի Իսրայէլացիք շատ անգամ ապստամբուելով Աստծուց կռապաշտութիւն կառնէին, Աստուած ևս նոցա կ'մատնէր դրացի թագաւորներէ ձեռն, և երբ կ'զղջանային և Աստուծոյ կ'աղաւինուէին, Աստուած երևելի մէկին հանելով նորա ձեռնովն կ'ազատէր նոցա իւրեանց թշնամեաց ձեռնէց ։ Այս երևելի մարդիկ Դատաւոր կ'կոչուէին, և կ'կառավարէին ժողովրդին մինչև իւրեանց մեռնելը ։

Հ. Երբ Իսրայէլացիք կռապաշտութեան մէջ կ'ընկանէին, ինչ կուռքեր կ'պաշտէին ։

Պ. Կ'պաշտէին դրացի ազգաց Քանանացւոց, Արաբացւոց կուռքերն, Բահաղ. Բէլզեբուղ,



Բէեղզեբուղ, Մեղքոմ և Աստարոթ ։ Իսրայէլացիք սոցա, այն ազգերի գարշելի սովորութեան նման, իւրեանց զաւակներն կ'զոհէին ։

Հ. Իսրայէլացւոց դատաւորների գլխաւորներն որոնք են ։

Պ. Իսրայէլացւոց դատաւորների գլխաւորներն են՝ Գեդէօն, Յեփթայէ, Սամփսոն, Հեղի և Սամուէլ ։

ԳԵԴԵՈՆ. 1268 – 1228. Ն. Ք.

Հ. Գեդէոն ինչ երևելի գործ արեց ։

Պ. Իսրայէլացիք Մադիանացւոց ձեռն մատնուած էին ( 1275. 1268. Ն. Ք ) Գեդէոն Աստուծոյ հրամանով 300. հոգի ընտրեց, որոնք գիշերով ''Սուր տեառն և Գեդէոնի,, աղաղակելով յարձակուեցին Մադիանացւոց բանակի վերայ, Մադիանացիք շփոթուելով և միմեանց ջարդելով փախան ։

Հ. Գեդէոն ինչպէս համարձակուեց 300. հոգւով Մադիանացւոց բանակին վերայ յարձակուել ։

Պ. Աստուած նորան մի նշան տուած էր ։ Գեդէոն գզաթ մի ( բուրդ ) դրեց գետնին և գիշերն անձրև գալով այն գզաթն միայն թրջեց. հետևեալ գիշերն կրկին անձրև եկաւ, և գետինն միայն թրջուեց, բայց գզաթն չոր

մնաց ։ Գեդէոն այս հրաշքն տեսնելով սիրտ առեց և յաղթեց ։

---

## ՅԵՓԹԱՅԷ 1185 – 1180 Ն. Ք.

Հ. Յեփթայէ ի՞նչ արեց ։

Պ. Յեփթայէ Իսրայելացքոնց ազատեց Ամոնացքոնցից, որոնց ձեռն մատնուած էին նոքա իւրեանց կռապաշտութեան համար ։ Յեփթայէ պատերազմից յառաջ ուխտ էր արած որ, եթէ յաղթութեամբ յետ դառնայ, իւր ընտանեացից առաջն գնացող առաջին անձն զոհէ ։ Յեփթայէի միամօր աղջիկն հօր արած ուխտն չիմանալով ուրախութեամբ նորա յառաջն գնաց, երբ Յեփթայէ յաղթանակով յետ կ'դառնէր ։ Յեփթայէ շատ տխրեց, բայց կատարեց իւր ուխտն ։

---

## ՍԱՄՓՍՈՆ 1120.

Հ. Սամփսոն ո՞վ էր և ի՞նչ արեց ։

Պ. Սամփսոն Աստուծոյ մի նուիրած մարդ էր, Աստուած ևս նորա մարմնոյն սաստիկ ոյժ էր



տուած ։ Մի անգամ մի առիւծի պատահելով, բռնեց՝ երկու կտոր արեց գազանին ։ Ուրիշ մի անգամ իշի մի չանեքով Փղշտացքոնցից (որոնց ձեռն մատնուած էին այն ժամանակումն Իսրայելացիք) 1000 հոգի սպանեց ։ Սամփսոն Փղշտացքոնց շատ վնասներ տալուց յետոյ վերջապէս ընկաւ նոցա ձեռն որ կուրացուցին զնա ։ Մի անգամ երբ փղշտացքոնց իշխանները Դագոն չաստուածի մեհենի մէջ ժողոված էին, Սամփսոն մեհենի երկու սիւներից բռնելով քաշեց, շէնքն կործանուեց և 3000 հոգի, ինքն ևս մի տեղ, տակումն մնալով մեռան ։

---

## ՀԵՂԻ

Հ. Հեղի ո՞վ էր և ի՞նչ արեց ։

Պ. Հեղի քահանայապետ էր, և Սամփսոնից յետ դատաւոր դարձաւ Իսրայէլացւոց ։ Հեղի բարեպաշտ էր, բայց նորա որդիքն չար էին, և Հեղի թոյլ մարդ լինելով նոցա չըպատժելոյն համար՝ կ'մեղադրուի Սուրբ գրոց մէջ ։ Նորա ժամանակումն Իսրայելացիք մի պատերազմ ունեցան Փղշտացքոնց հետ, և Փղշտացիք Իսրայելացւոց յաղթելով Աստուծոյ Տապանակն գերի տարան, և իւր

եանց Դագոն չաստուծոյ մեհենի մէջ դրին։ Հետևեալ օրն տեսին որ Դագոնի կուռքն Տապանակի առաջին կործանուած և կտոր կտոր եղած էր։ Փղշտացիք մեծամեծ հարուածներ կրելով Տապանակի պատճառաւ, այն յետ դարձրին Իսրայէլացւոց։

---

## ՍԱՄՈՒԷԼ 1171 – 1100. Ն. Ք.

Հ. Սամուէլ ով էր և ինչ արեց։

Պ. Սամուէլ մի բարեպաշտ Աննա անուամբ կընոջ որդի էր։ Տղայութիւնից Աստուծոյ նուիրուելով՝ Հեղիւ մօտ կ'բնակուէր, և նորա մահուանից յետ դատաւոր դարձաւ։ Աստուած Սամուէլին շատ կ'սիրէր, և նորան շատ ժամանակ կ'յայտնէր իւր կամքն։ Նորա ժամանակումն Իսրայէլացիք տեսնելով որ ուրիշ ազգերն թագաւոր ունէին և իւրենք չունէին, Սամուէլից թագաւոր ուզեցին, Սամուէլ ևս Աստուծոյ հրամանովն թագաւոր օծեց նոցա համար Սաւուղ անուամբ մինի։ Այսպէս դատաւորներն կ'դադարեն և կ'սկսի թագաւորաց ժամանակն։

---



## ՀՌՈՒԹ.

Հ. Դատաւորաց ժամանակում կռապաշտներից աստուածապաշտ դարձող ո՞ր կին է, որի պատմութիւնն յատկապէս յիշուած է Աստուածաշնչի մէջ։

Պ. Հռութ է, որի պատմութիւնն այս կերպով կ'յիշուի Աստուածաշնչի մէջ։

Դատաւորաց ժամանակումն մի մեծ սովի պատճառաւ մի մարդ Բեթղայեմից Մովաբացւոց երկիրն կ'գնայ իւր Նոյեմի անուն կնոջով, և երկու որդիքներով, որոնք այն տեղ ամուսնանալով Մովաբացի աղջկերք կառնեն։ Մարդն և երկու որդիքն մեռնելուց յետոյ՝ Նոյեմի կրկին իւր երկիրն դառնալ կուզի, և հարսներից մինն Հռութ չուզելով իւր սկեսուրն թողնել՝ նորա հետ կ'գայ Բեթղայեմ։ Այն տեղ Բոոս անուամբ մի հարուստ մարդ հնձի ժամանակում տեսնելով Հռութին, և լսելով նորա առաքինուէին, միանգամայն իմանալով որ նորա վախճանուած այրն իւրն ազգական է, իւրն կին կ'առնի Հռութին։ (Պէտք է իմանալ որ Հրէից մէջ օրէնք էր որ, երբ մի մարդ կըմեռնէր անորդի, նորա ամենից մօտ ազգականն կ'պարտաւորէր այրի մնացած կնոջն

առնել)։ Այս Հռութ մի մեծ թագաւորի, այսինքն Դաւթի պապի (մեծ հօր) հօրն մայրն էր։

# Ե. ԺԱՄԱՆԱԿ

## ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՒ ԲԱԲԻԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆՆ
## 1100 – 600. Ն. Ք.

Հ. Սաւուղ ինչպէս թագաւոր ընտրուեց։

Պ. Սաւուղ գեղեցիկ և բարձրահասակ երիտասարդ էր։ Միանգամ հօր կորցրած իշերն կնալով գտնել, Սամուէլ մարգարէի մօտ գնաց որ նորանից իմանայ իշերի ինչ տեղ լինելը։ Բայց Սամուէլ Սաւուղին թագաւոր օծելով Իսրայէլացւոց մօտ բերեց. նոքա ևս «կեցցէ արքայ» ասելով նորան բոլորը ողջունեցին։

Հ. Սաւուղ ինչպէս թագաւորութիւն արեց, և նորա վախճանն ինչպէս եղաւ։

Պ. Սաւուղ (1092 – 1052. Ն. Ք.) մեծամեծ յաղթութիւններ անելով ազատեց Իսրայէլացւոց իւրեանց թշնամիներից, բայց Ա-



մաղէկացւոց վերայ ուղարկուելով որ նոցա ջարդէ, Սաւուղ Աստուծոյ հրամանին հակառակ չսպանեց նոցա Ագագ թագաւորին, և այս անհնազանդութեան համար Աստուծոյ երեսից ընկաւ, և մի չար հոգւոյ կ'տանջուէր։ Վերջապէս Փղշտացւոց ընդդէմ տուած պատերազմի միջումն յաղթուելով իւր որդիներն կոյս բռնեց և մի օգնութիւն չգտանելով ինքն իւրն սպանեց։ Նորան յաջորդեց Դաւիթ։

Հ. Դաւիթ ով էր։

Պ. Դաւիթ մի երեխայ պատանի էր Յուդայի ցեղից և իւր հօր ոչխարներն հովւում էր։ Սաւուղի թագաւորութեան ժամանակումն, երբ մի անգամ Իսրայէլացիք Փղշտացւոց հակառակ պատերազմ կ'տային, Գողիաթ անուամբ մի հսկայ Փղշտացւոց բանակից դուրս գալով ուզեց Իսրայէլացւոց մինի հետ մենամարտութիւն անել։ Դաւիթ պատանին գիւղաուածով բանակի մէջ գտանուելով, նորա հանդէպ գնաց և մի պարսատիկով տուեց սպանեց հսկային։

Դաւիթ քաջ քնարահար լինելով, երբ Սաւուղի մէջ դեւն կ'մտանէր, քնարն ածելով կ'հանգստացնէր Սաւուղին։ Դաւիթ մեծանալով քաջ զինուոր դարձաւ, և մեծ մեծ ծառայութիւններ արեց Սաւուղին և վերջապէս նորան փեսայ դարձաւ։ Բայց Սաւուղ տեսնելով որ Դաւիթ շատ սիրելի էր ժողովրդին, նախանձեցաւ, և կ'մտածէր նորան

սպանել ։ Դաւիթ տեսնելով որ Սաւուղի մօտ մնալը վտանգաւոր էր, փախաւ, և մինչև Սաւուղի մահն հալածական կ՚պտտէր սարերի մէջ և օտար երկրներում։ Սաւուղ էն-քան կ՚ատէր Դաւթին, որ մինչ անգամ նորա բարեկամներին կ՚հալածէր և կ՚սպանէր։ Սպանել տուեց Աբիմելէք քահանայապետին որ հաց և զէնք էր տուել Դաւթին՝ նորա փախած ժամանակումն, փոքր մնաց որ սպանում էր նա և իւր որդւոյն Յովնաթանին, որ մտերմացած բարեկամ էր Դաւթին։ Ընդ հակառակն Դաւիթ կ՚պատուէր և կ՚սիրէր Սաւուղին որպէս իւր թագաւորին ։ Մի քանի անգամ Սաւուղ Դաւթի ձեռն ընկաւ, էնպէս որ կարողէր Դաւիթ նրան սպանել, բայց չմոտկացաւ նրան ։

Հ. Դաւիթ ինչպէս թագաւորութիւն արեց ։

Պ. Երբ Սամուէլ մարգարէն Սաւուղի կենդանութեան ժամանակումն գաղտ թագաւոր էր օծած Դաւթին։ Սաւուղի մեռնելուցն յետ Դաւիթ նախ Յուդայի ցեղի, և յետոյ բոլոր Իսրայէլացւոց վերայ թագաւորեց 40, տարի (1052 – 1012 . Ն. Ք)։ Դաւիթ Երուսաղէմ քաղաքն շինելով, Աստուծոյ Տապանակն բերեց Սիօն որ Երուսաղէմի մէջ բլուր էր, շատ ազգերի յաղթեց, և ընդարձակեց Իսրայէլացւոց թագաւորութիւնն ։

Հ. Դաւիթ ինչ սխալմունք արեց ։

Պ. Դաւիթ որ էնքան երկիւղած և բարեպաշտ



էր, Ուրիա անուամբ մէկի կնոջ աչքն կ՚պնելով, Ուրիային սպանել տուեց և առեց նորա կնոջն։ Ի պատիժ նորա այս մեղքին՝ Աստուած նորա հանդէպ հանեց իւր Աբիսողոմ որդւուն։ Աբիսողոմ շատ խորագէտ լինելով ժողովրդի սիրտն շահեց, և կ՚ուզէր հօր տեղ թագաւորութիւն առնել. և որովհետև որդի չունէր, իւր անունն մշտնջենաւոր առնելոյ համար մի արձան կանգնացրեց. վերջապէս յարմար մի ժամանակ գտանելով ապստամբեց Դաւթիցն, և փախցրեց նրան իւր աթոռիցն, բայց ջորւով անտառի միջովն անցկացած ժամանակումն, մազերէն կախուեց մի ծառի ճիւղերքից և սպանուեց։ Դաւիթ կրկին յետ դառնալով իւր աթոռն մեռաւ, դեռ չմեռուած իւր տեղն թագաւոր ընտրել տալով իւր Սողոմոն որդւոյն ։

Մի անգամ ևս Դաւիթ բոլոր ժողովրդին համարել տուեց, ինչպէս կ՚կարծուի վասն իմանալոյ իւր հպատակների թիւն ։ Աստուած Դաւթի այս հպարտութիւնն ուզելով պատժել, Գադ մարգարէի ձեռովն առաջարկեց նրան երեք պատիժ, որոնց մինն էր երեք օր ժանտամահ ։ Դաւիթ ժանտամահն ընտրեց, և ժողովրդեան եօթանասուն հազար հոգի մեռան երեք օրուայ մէջ ։ Երբ ժողովրդի ջարդող հրեշտակն Երուսաղէմի մէջ ևս պիտի առնէր նոյն կոտորածն, Դաւիթ զղջացաւ, և Աստուած դադրացրեց

հարուածն ։

Հ. Սողոմոն ինչպէս մարդ էր ։

Պ. Սողոմոն ( 1012 - 972 . Ն . Ք ) բաց հարըստութիւնից և զօրութիւնից, ունէր նա և մեծ իմաստութիւն, և իւր իմաստութեան համար ինչպէս համբաւուած էր որ Սաբայի ( Արաբիոյ ) թագուհին եկաւ տեսնել Սողոմոնին, և նորա իմաստութիւնն և մեծութիւնն տեսնելով ինչպէս զարմացաւ որ երանի տուեց նորա բոլոր ծառայքներին ։

Կ'պատմուի թէ Սողոմոնի թագաւորութեան սկզբումն երկու կին դատաստան եկան նորա առաջն ։ Սոքա մի և նոյն տան մէջ բնակուելով իւրաքանչիւրն մի տղայ ծնած էին . բայց կնոջ մինն գիշերն պառկած լինելով իւր տղի վերայ սպանած էր նորան ։ Արդ ամէն մինն ևս պինդ կերպով կ'ասէր թէ ողջ տղէն իւրն էր ։ Սողոմոն երբոր այս դատն լսեց հրամայեց որ ողջ տղէն երկու կտոր առնելով կէսն մի կնոջն տան և կէսն միւսին ։ Տղի իսկ մայրն լսելով այս վճիռն, և տեսնելով որ տղէն պէտքէր սպանուէր, գութն շարժուելով սկսեց աղաչել որ տղէն ամբողջ միւս կնոջն տուուի ։ Այն ժամանակումն Սողոմոն հասկանալով որ իսկ մայրն այն էր, հրամայեց ողջ տղէն նորան տալ ։

Հ. Սողոմոն ինչ երևելի գործեր արեց ։

Պ. Սողոմոն Փիւնիկեցի ճարտարապետների ձեռնով մի շատ մեծ և փառաւոր տաճար շի-



նեց Երուսաղէմում, և զոհ մատուցանելով Աստուծոյ շատ հաճելի եղև, բայց յետոյ Աստուածային հրամանի հակառակ շատ կիններ առնելով կռապաշտ ազգերից՝ կուռքերն պաշտեց ։ Սողոմոնի այս մեղքի համար Աստուած իմացրեց նորան որ նորա թագաւորութիւնն երկու բաժանելու էր, ինչպէս որ եղև նորա մահուանից յետ ։

Հ. Սողոմոնին ով յաջորդեց ։

Պ. Սողոմոնին յաջորդեց նորա Ռոբովամ որդին ( 972 – 955 . Ն . Ք ) Իսրայէլացի ժողովուրդն խնդրեց սորանից՝ իւր հօր Սողոմոնի դըրած ծանր հարկերն թեթևացնել, և երբ Ռոբովամ չլսեց նոցա բաց, 'ի Յուդայի և Բենիամինի ցեղերից՝ մնացեալ տասն ցեղերն ապստամբուելով Յերոբովամ անուամբ մէկի իւրեանց թագաւոր դրին, և այնպէս Իսրայէլացւոց թագաւորութիւնն երկու բաժանուեց ( 972 – 720 . Ն . Ք . ) տասն ցեղերի թագաւորութիւնն որի գլխաւոր քաղաքն էր Սամարիա կոչուեց Իսրայէլի թագաւորութիւն, իսկ միւս երկու ցեղերինն՝ կոչուեց Յուդայի կամ Հրէից թագաւորութիւն որի մայրաքաղաքն էր Երուսաղէմ ։

Հ. Այս երկու թագաւորութիւններն ինչպէս էին միմեանց հետ ։

Պ. Այս երկու թագաւորութիւններն միշտ նախանձով էին միմեանց հետ, և գրեթէ շարունակ պատերազմ կէր նոցա մէջ ։

Իսրայէլի թագաւորներն կուռ-քեր հաստատեցին իւրեանց մէջ, որպէս զի ժողովուրդն նոցա պաշտելով Երուսաղէմ չգնան տաճարի մէջ ճշմարիտ Աստուծոյ զոհ մատուցանելոյ, ինչպէս որ Աստուած պատուիրած էր:

---

## ԻՍՐԱՅԵԼԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ 972 - 720. Ն. Ք:

"

Հ. Իսրայէլի թագաւորութիւնն ինչպէս յառաջ գնաց:

Պ. Յերոբովամից յետ Իսրայէլի բոլոր թագաւորներն անօրէնք մարդիկ էին, և նոցա խռովութիւնն և ապստամբութիւնն պակաս չեղաւ: Բայց ամենէն չար թագաւորն էր Աքաաբ: Սորա կինն Յեզաբէլ Սիդոնացւոց թագաւորի աղջիկն՝ փառաւոր մի մեհեան շինեց Սամարիայի միջում փիւնիկեցւոց արեգական աստուածոյն Բահաղու, և լուսնի աստուածոյն Աստարովթին, և հարիւրներով քուրմեր կ'պահէր:

Հ. Աստուած ինչ ուղարկեց Իսրայէլացւոց խրատելու համար:

Պ. Աստուած ուղարկեց Եղիա մարգարէին որ շատ հրաշալի գործեր արեց: Երեք տարի անձրև չթողեց գալ, Աքաաբի և Յեզաբէլայ



ձեռնիցն փախստական եղած միջոցումն ապ-տաներէց հերահրաշէց, Սիդոնացի մի այրի աղքատ կնոջ ալէւրն ու ձէթն բազմացրեց հրաշքով և նորա մեռած որդւոյն յարուցրեց. Աստուծոյ ճշմարիտ լինելն և Բահաղի սուտ լինելն Իսրայէլի ժողովրդին իմացնելու համար մի անգամ Բահաղի բոլոր քրմերին ժողովեց Կարմեղոս սարումն, և ասէց նոցա որ Բահաղին ողջակէզ մատուցանեն, ինքն ևս Եհովայի ճշմարիտ Աստուծոյ ողջակէզ մատուցանի, և որի ողջակիզի փայտերն որ երկնքի կ'րակով բորբոքուեն, նորա պաշտածն ճշմարիտ Աստուած է: Բահաղի քուրմերն մինչև կէս օր աղաղակեցին իւրեանց Աստուծոյն և մի բան չեղև. յետոյ Եղիա երբ աղօթք արեց առ Աստուած, երկնքէցն հուր վերէերելով լափէր ողջակէզն: Այն ժամանակումն ժողովուրդն հաւատաց Աստուծոյ և Բահաղի քուրմերն ջարդոտեցին:

Աքաաբի յաջորդն Օքոզիա երկու անգամ զօրք ուղարկեց բռնել և բերել Եղիային որ մի բարձր բլրի գլխումն նստած էր, բայց Եղիա երկու անգամն ևս երկնքէցն հուր վէր բերեց զօրքին վերայ: Եղիա բոլոր այս հրաշալի գործքերն անելուց յետ, իւրն յաջորդ թողով Եղիսէ մարգարէին, հրեղէն կառօք երկինք վերացաւ:

Հ. Եղիսէ ով էր և ինչ հրաշքներ գործեց:

Պ. Եղիսէ Եղիայի աշակերտն էր, և Եղիայի վե-

բառնալուցն յետ նորա հոգին կրկին Եղիսէի վերայ եկաւ :

Եղիսէի գործած հրաշքներն սոքա են: Մի այրի կնոջ իւղն շատացրեց, մի ուրիշ կընոջ մեռած որդւոյն կենդանացրեց, քանի հացով և փոքր ինչ ձիթով շատ մարդկանց կերակրեց, Ասորւոց Թագաւորի Նէեման անուամբ զօրավարի բորոտութիւնն բժշկեց լոկ լուացուելով: Եղիսէի գլուխն կնտակ էր և երբ մի անգամ ստահակ տղերք կնախատէին նրան "կնտակ" կոչելով, Եղիսէ անիծեց նոցա, և երկոյն անտառից արջեր դուրս գալով պատառեցին այն տղերքանց :

Մի անգամ Իսրայէլի և Ասորւոց Թագաւորների մէջ պատերազմ կէր, և Եղիսէ Ասորւոց բանակի մէջ եղածներն մարգարէաբար կ'յայտնէր Իսրայէլի Թագաւորին: Ասորւոց Թագաւորն այս իմանալով, զօրքով պաշարեց այն քաղաքն որ տեղ որ կ'գտնուէր Եղիսէ : Եղիսէի ծառայն քաղաքն տեսնելով պաշարուած Ասորքանցից շատ վախեցաւ, բայց հրաշքով հրեղէն ձիեր և կառքեր տեսաւ, որոնք Եղիսէին օգնութեան եկած էին: Աստուած Ասորւոց զօրքի աչքերն մի տեսակ կուրութեամբ բռնեց, այնպէս որ կարծելով թէ ուրիշ տեղ կ'երթան՝ ուղղակի իւրեանց թշնամւոյն Իսրայէլի մայրաքաղաքն Սամարիա եկան Եղիսէի հետ, և երբ այն տեղ նոցա աչքերն բացուելով տեսան որ Սամարիու մէջ էին՝ շատ վախեցան, բայց Եղիսէ նոցա առանց վնասի իւրեանց տեղն յետ դարձրեց :



---

## ՏԱՍՆ ՑԵՂԵՐԻ ԳԵՐՈՒԹԻՒՆՆ 771 – 740 – 721 .

Հ. Իսրայէլի Թագաւորութեան վախճանն ինչպէս եղև :

Պ. Աքայաբեանց յետ տասն երկու Թագաւորներ միմեանց սպանելով տիրեցին Իսրայէլի վերայ: Նախ Ասորեստ ստէպ ստէպ յարձակուելով կաւերէին երկիրն (771 – 740 Ն. Ք.) :

Մարգարէքներն ունայն տեղը կ'խրատէին ժողովրդին և կ'սպառնային երկրի կործանումն. Իսրայէլ ևս քան զևս ընկղմուեց կռապաշտութեան մէջ և աւելի չարացաւ : Վերջապէս Աստուած ուղարկեց նոցա վերայ Ասորեստանի կամ Նինուէի հզօր Թագաւորներն:

Նախ՝ Թագղաթփաղասար (740 Ն. Ք.) Իսրայէլի Թագաւորութեան մի մասն քերեց, և ապա Սաղմանասար գալով (720 Ն. Ք.) ջնջեց Իսրայէլի Թագաւորութիւնն, որ տևեց իբր 250. տարի : Իսրայէլի տասն ցեղերն գերի տանուելով Հայաստան, և Ասորեստանի Թագաւորութեան այլ և այլ կողմերէնքն՝ այլ ևս յետ չդարձան իւրեանց երկիրն :

Հ. Իսրայէլացւոց երկիրն ի՞նչ եղաւ ։

Պ. Ասորեստանի թագաւորներն Ասորւոց երկրէն և Միջագետքէն որոնց տիրած էին՝ գաղթականներ ուղարկեցին Իսրայէլի երկիրն։ Այս գաղթականներն խառնուեցին այն տեղ մնացող Իսրայէլացւոց հետ, և Սամարացի կոչուած նոր մի ժողովուրդ շինուեց, որոց կրօնքն Հրէութենէ և կռապաշտութենէ խառն էր ։

Հ. Իսրայէլի տասն ցեղերն գերի տանող Ասորեստանցիք ո՞վ էին ։

Պ. Ասորեստանցիք Իսրայէլացւոց ժամանակում և նորանից յառաջ մեծ ազգ էին Եփրատ և Տիգրիս գետերի կողմերն, Հայաստանի հարաւային արևելեան կողմն ։ Հին պատմութեանց նայելով մի Քուշեան կոչուած ցեղ կ'երևի որ հաստատած է այս տէրութիւնն նախ Բաբելոն քաղաքն շինելով Եփրատ գետի մօտ, և յետոյ Նինուէ՝ Տիգրիսի եզերքում ։ Այս երկու քաղաքներն ժամանակով երկու ջոկ տէրութեան մայրաքաղաքներ դարձան ։ Ասորեստանցւոց մայրաքաղաքն միշտ Նինուէ էր ։

Հ. Ասորեստանցւոց վերայ ի՞նչ կ'իմացուի ։

Պ. Ասորեստանցւոց թագաւորներն սովորութիւն ունէին քարէ տախտակների վերայ քանդակել տալ մարդոց, անասնոց, քաղաքների, պատերազմների, կրօնական արարողութիւնների, որսի և ուրիշ բաների և դէպքերի



պատկերներ, մի տեսակ գիր ևս ունէին որ բևեռագիր կամ սեպաձև գիր կ'կոչուի, որով քարերի, պատերի և աղիւսների վերայ շատ գրուածներ կ'գտանուէին մինչև ցարդ ։ Դեռ երեսուն տարի է որ մի քանի գիտուն մարդիկ սկսեցին կարդալ այս գրուածների մին մասն ։

Նինուէի աւերակներն որ Ասորեստանցւոց քանդակներ և գրուածներ կ'պարունակեն՝ շատ դարերից յետ հողի տակում ծածկըուած էին, Նինուէ քաղաքի տեղն մինչ անգամ ոչ մինն չգիտէր ։ Գաղիացի հիւպատոսն Պոտտա 1842 ին, և Լէյարտ անուամբ մի Անգղիացի 1845 ին, սկսեցին որոնել Նինուէի տեղն ։ Լէյարտ սկսեց բորել տալ Մուսուլի հանդէպն գտնուած հողաբլուրներն, մանաւանդ "Նեբրովթայ հողաբլուր" կոչուածն ։ Բաւականին տեղ բորելուցն յետ գտնուեց մարդի մի ահագին քարէ գլուխ, որի մարմինն առիւծի էր և արծուի թևեր ունէր ։ Այս արձանն մի դռան առաջին էր և ուրիշ սորա նման արձաններ գտնուեցին յետոյ, որոց մի մինի մարմինն ցլի մարմին էր, բայց բոլորքն ևս թևաւոր և մարդի գլուխ ունէին ։ Շատ քարէ տախտակներ ևս գտնուեցին գեղեցիկ քանդակներով ։ Սոցա բոլորն 2500 . տարուց յետ այն հողաբլուրների տակում պահուած էին ։ Բոլոր այս հնութիւններն այժմ կ'պահուին Լոնդոնի,

Բարիզու և Եւրոպայի ուրիշ քաղաքաց Թանգարաններու մէջ. և հազարաւոր տարւով յառաջ ապրող այն հին ազգին, Նորա վարքն, սովորութիւններն, արուեստներն, կրօնքն իմանալու համար կ՚օգնեն ։ Գույունճուգ կոչուած տեղումն գտնուած պալատի մէջ 1000․ հատիցն աւելի եփած աղիւսներ գտնուեցին բեւեռաձև գրուածներով, և կերևի թէ սոքա Ասորեստանցւոց գրքերն էին ։

Նինուէի աւերակներու մէջ գտնուած քանդակներումն կ՚տեսնուեն գերիք և Նոցա տուած տանջանքներն, զինուորներ, պատերազմական կառքեր, քաղաքներու պաշարումն և ուրիշ շատ բաներ ։

## ՅՈՒԴԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ 975 – 588 ։

Հ․ Յուդայի Թագաւորութիւնն ինչպէս յառաջ գնաց ։

Պ․ Թագաւորութեան բաժանուելուցն յետ, Դաւթի գահի վերայ Ռոբովամ Թագաւոր նստաւ Երուսաղէմի մէջ ։ Սոցա մէջ ևս ամբարիշտ և չար Թագաւորներ եղեն ։ Զոր օրինակ Յովսափատ բարեպաշտ Թագաւորիցն յետ Աքազ Երուսաղէմի փողոցներու մէջ Բահաղին Բագիններ



կանգնեցրէց, և Աստուծոյ տաճարն փակել տուեց ։

Եզեկիա, Աքազի բարեպաշտ որդին, կրկին բանալ տուեց տաճարն, և կուռքերն ջնջեց ։ Սոցա մինն էր անապատի մէջ Մովսէսի շինած պղնձէ օձն որին սկսել էր ժողովուրդն խունկ մատուցանել ։ Եզեկիա ուրիշ շատ բարեգործութիւններ արեց, Աստուած ևս ազատեց Նորան իւր Թշնամիներիցն ։ Եզեկիայի բոլորիցն զօրաւոր Թշնամին էր Սենեքերիմ Ասորեստանի Թագաւորն, որ Երուսաղէմի վերայ եկաւ․ բայց մի գիշերուայ միջումն իւր բոլոր զօրքն մի ծանր փորձանքէ կորցնելով իւր երկիրն յետ դարձաւ ։

Աստուած Եզեկիայի կեանքն ևս երկարացուց ։ Եզեկիա մի անգամ ծանր հիւանդացաւ, և իմանալով որ պիտի մեռնէր, Աստուծոյ ապաւինեց, և Աստուած 15․ տարուայ կեանք շնորհեց Նորան ։

Հ․ Եզեկիայի յաջորդներն Նորա ճանապարհին հետևեցին ։

Պ․ Ոչ․ Նորա որդին Մանասէ սոսկալի եղեռնագործութիւններ արեց, իւր զաւակներն անգամ զոհեց Ասորւոց Մոլոք կուռքին, ժողովուրդն ևս Նորան հետևեց ։ Աստուած սաստիկ բարկանալով Հրեից վերայ՝ որոշեց ջնջել նոցա Թագաւորութիւնն ։ Ասորեստանցւոց Ասորդան Թագաւորի զօրավարներն գալով շղթաներով կապեցին Մանասէին և Բաբելոն տարան ։ Մա-

նասէ զղջալով կրկին յետ դարձաւ իւր թագաւորութիւնն, և օտար Աստուածներն ջընջեց ։

Նոյնպէս նորա թոռնն Յովսիա (642–511. Ն. Ք.) Աստուածպաշտութիւնն հաստատեց բոլոր Հրէաստանի մէջ, և մեծամեծ հռչակաւոր բարեկարգութիւններ արեց։ Յովսիայի ժամանակումն տաճարի միջումն գտնուեց Մովսէսի օրէնաց գիրքն որ կորած կամ մոռացուած էր, և կարդացուեց բոլոր ժողովրդի մօտ, որ մեծ երկիւղով լսեցին ։ Բայց Աստուծոյ բարկութիւնն չվերացաւ Հրէից վերնիցն։ Յովսիայի մեռնելուցն երբ 20. տարի յետ, Հրէից վերջին թագաւորի Սեդեկիայի օրումն, Քաղդէացւոց կամ Բաբելացւոց թագաւորն Նաբուգոդոնոսոր առեց Երուսաղէմն, Սեդեկիայի աչքերն հանելով բոլոր ժողովրդով գերի տարաւ, Երուսաղէմի տաճարն այրեց, այն տեղի գտնուած անօթներն Բաբելոն ուղարկեց, և քանդեց բոլոր քաղաքն ։

Այսպէս Յուդայի թագաւորութիւնն ևս 387. տարի տևելով ջնջուեց (588 Ն. Ք.) ։



# ՄԱՐԳԱՐԷՔ

Հ. Թագաւորաց ժամանակումն Յուդայի և Իսրայէլի մէջ ինչ երևելի մարդիկ կային ։

Պ. Թագաւորաց ժամանակումն Յուդայի և Իսրայէլի մէջ մարգարէ կոչուած երևելի մարդիկ կային ։ Սոքա Աստուծոյ ներշնչեալ ծառայք լինելով նորա կամքն և հրամաններն կ'ըպատմէին ժողովրդին, ապագայն կ'գուշակէին, ոմանք նաև հրաշքներ կառնէին ։ Յուդայի և Իսրայէլի ամբարիշտ թագաւորներն սոցանից ոմանց հալածեցին և սպանեցին ։

Հ. Այս մարգարէքների երևելիքն որո՞նք են ։

Պ. Այս մարգարէքների երևելիքն են, Եսայի, Երեմիա, Եզեկիէլ, և Դանիէլ։ Այս չորսն “մեծ մարգարէք„ կ'կոչուեն, քանզի բաւական ընդարձակ գրքեր թողած են ։ Կան ուրիշ տասն երկու մարգարէք, որոնք իւրեանց գըրքերի փոքրկութեան համար “փոքր մարգարէք„ կ'կոչուեն ։

Հ. Այս մարգարէքն երբ մարգարէացան ։

Պ. Եսայի՝ Յուդայի Աքազ և Եզեկիա թագաւորների ժամանակումն (760 – 710 Ն. Ք.) կմարգարէանէր. Երեմիա՝ Յուդայի թագաւորութեան վերջին տարիներումն (630 – 580 Ն. Ք.) ։ Եզեկիէլ՝ Հայաստանի մէջ (650 Ն.

Ք.) գերի եղած Իսրայելացւոց. Դանիէլ՝ Բաբելոնի մէջ (537 Ն. Ք.):

Հ. Աստուած մարգարէքներն առ Իսրայելացիս միայն կ'ուղարկէ՞ր:

Պ. Աստուած Ասորեստանցւոց ևս մի մարգարէ ուղարկեց Իսրայելեցն: Ասորեստանցւոց մայրաքաղաքն Նինուէ շատ հարուստ և ընդարձակ քաղաք էր: Աստուած Յովնան մարգարէին պատուիրեց գնալ քարոզել Նինուէացւոց, բայց Յովնան անհնազանդ գտանուելով Աստուծոյ ձայնին, նաւն մտաւ Յոպպէ երթալ, և ճանապարհում սաստիկ ալէկոծութիւն եղև, այնպէս որ նաւն պիտի ընկղմէր: Նաւին մէջ եղածներն վիճակ գձեցին գտնելու համար թէ որի մեղքի համար Աստուած այն ալէկոծութիւնն տուած էր: Վիճակն Յովնանու վերայ դուրս եկաւ, և Յովնան ծովն գցուեց և մի մեծ ձուկն Աստուծոյ հրամանովն կուլ տալով Յովնանին երեք օրից յետ դուրս փսխեց նրան: Յովնան Նինուէ գնաց և քարոզեց, Աստուծոյ պատուիրածի պէս ասելով, "Նինուէ երեք օրեցն յետ պիտի կործանուի": Բայց Նինուէացիք ապաշխարեցին և Աստուած ներեց նոցա և չկործանեց նոցա քաղաքն:

Յովնան տխրելով որ իւր խօսքն չկատարուեց, վաստակած կ'նստէր քաղաքեցն դուրս: Աստուած նոյն օրն այն տեղում մի դդմենի բուսցրեց, որոյ շուաքի տակում



պառկելով Յովնան մխիթարուեց, բայց հետևեալ առաւօտ արևն ծագելուն պէս դդմենին չորցաւ, և Յովնան շատ ցաւեց դդմենւոյն համար: Այն ժամանակն Աստուած նրան ասէց, "Դու մի դդմենւոյ համար այսչափ գթացիր և տխրեցար, հապա ես ինչպէս չգթայի Նինուէի վերայ որ տեղ որ այնչափ անմեղներ կ'բնակուեն":

## Ե. ԺԱՄԱՆԱԿ

### ԲԱԲԵԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԻՑՆ ՄԻՆՉԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱԼՈՒՍՏՆ 588—1 Ն. Ք:

Հ. Հրէայք գերութեան ժամանակում ինչ արին:

Պ. Հրէից միջեցն շատ բարեպաշտ անձինք չըմոռացան երբէք իւրեանց հայրենի երկիրն, միշտ այն տեղ վերադառնալ կ'փափագէին, մարգարէքն արդէն ասած էին թէ Յուդայի կամ Հրէից գերութիւնն եօթանասուն տարի պէտք էր տևէր: Աստուած ևս նոցա միջեցն մի քանի երևելի անձինք հանեց, որոնք Նաբուգոդոնոսորի և նորա յաջորդների, ինչպէս նաև Պարսից թագաւորներին, շատ սիրելի եղին: Այսպէս էին Դանիէլ. Զօրոբա-

էլ, Նէէմիա և Եզրաս ։

Հ. Դանիէլ ո՞վ էր և ինչպէս երևելի եղև ։

Պ. Բաբելացւոց Նաբուքոդոնոսոր Թագաւորն Երուսաղէմից գերի տարուած Հրէաներից մի քանի ազնուական և ուշիմ պատանիք ընտրելով զնոսա Քաղդէացւոց, այսինքն Բաբելացւոց գիտունների իմաստութեան մէջ կրթել տուեց ։ Այս պատանիքների մէջ անուամբ կ'յիշուեն Դանիէլ, և նորա երեք ընկերներն Սեդրաք, Միսաք և Աբեդնագով ։

Նաբուքոդոնոսոր մի անգամ երազ տեսաւ. Քաղդէացւոց իմաստուններն չ'կարողացան մեկնել Թագաւորի երազն. և Դանիէլ Աստուծոյ հոգւովն մեկնելով երազն, սիրելի եղև Թագաւորին, և մեծ պաշտօնների հասաւ ։

Հ. Դանիէլի երեք ընկերների վերայ ինչ կ'ըպատմուի ։

Պ. Մի անգամ Նաբուքոդոնոսոր իւր պատկերն կանգնացնելով հրամայեց որ ամէն մարդ նորա առաջին երկրպագութիւն տայ, և այս հրամանին չհնազանդողն մի բորբոքուած հնոցի մէջ պիտի գձուէր ։ Դանիէլի երեք ընկերներն Աստուածապաշտ լինելով չուզեցին Նաբուքոդոնոսորի պատկերին երկրպագութիւն տալ, և բորբոքուած հնոցի մէջ գձուելով՝ անվնաս մնացին հրաշքով ։ Նաբուքոդոնոսոր տեսնելով այս հրաշքն՝ զարմացաւ, և Հրէից և նոցա Աստուծոյ անունն



փառաւորուեց հեթանոսաց միջումն ։

Հ. Նաբուքոդոնոսորի մահից յետ Դանիէլ ինչ եղև ։

Պ. Նաբուքոդոնոսորի յաջորդների ժամանակումն ևս Դանիէլ մեծ պատուի և պաշտօնի մէջ էր ։ Մի անգամ Բաբելացւոց վերջին Թագաւորն Բաղդասար իւր պալատի միջումն խնջոյք տալով, Նաբուքոդոնոսորի Երուսաղէմի տաճարից բերած սրբազան անօթներովն գինի կ'խմէր ։ Յանկարծ սրահի պատի վերայ մի ձեռն երևալով այս երեք բառերն գրեց. “Մանէ, Թեկէլ. Փարէս„ ։ Միայն Դանիէլ կարողացաւ այս խօսքերն կարդալ, և նոցա մեկնութիւնն տուեց Թագաւորին, ասելով թէ նորա Թագաւորութիւնն պիտի ջնջուէր ։ Եւ այնպէս եղև, փոքր ժամանակից յետ Պարսիկներն գալով տիրեցին Բաբելոնի ։

Հ. Պարսից Թագաւորների ժամանակումն Դանիէլին ինչ պատահեց ։

Պ. Պարսից Դարեհ Թագաւորի ժամանակումն Պարսից իշխաններն չարախօսեցին Դանիէլի համար թէ օտար աստուած կ'պաշտի, և նորան մի առիւծների խորի մէջ գձել տուեցին ։ Դանիէլ հրաշքով կենդանի մնաց կատաղի առիւծների մէջ ։ Հետևեալ օրն Դարեհ Թագաւորն որ շատ կ'սիրէր Դանիէլին՝ տեսնելով այս հրաշքն, հանեց Դանիէլին խորից, և Դանիէլ առաւել բարձրացաւ ։

Հ. Զօրաբաբէլ, Նէեմիա, և Եզրաս ո՞վ էին և ի՞նչ արին:

Պ. Երուսաղէմի աւերմունքիցն եօթանասուն տարի յետ, Պարսից Թագաւորն Կիւրոս Բաբելացւոց տէրութիւնն կործանելով բոլոր Ասիոյ տիրեց, և հրաման տուեց Հրէից որ իւրեանց երկիրն վերադառնալով կրկին շինեն Երուսաղէմ և տաճարն, Սողոմոնի տաճարի ոսկեղէն անօթների մեծ մասն ալ զորս Նաբուգոդոնոսոր բերած էր Բաբելոն՝ նոցա յետ դարձրեց:

Հրէից Թագաւորական ցեղից Զօրաբաբէլ անուամբ մի իշխանի՝ և Յեսու անուամբ քահանայապետի առաջնորդութեամբն քառասուն և երկու հազար ընտանիք Հրէաստան վերադառնալով, սկսեցին տաճարի շինութիւնն, Զաքարիա և Անգէ մարգարէքն ալ իւրեանց մարգարէութիւններովն կ՚քաջալերէին նոցա:

Կիւրոսի յաջորդներիցն Դարեհ Թագաւորն ուղարկեց Երուսաղէմ նաև Եզրասին, որ քահանայ լինելով հին Մովսիսական պաշտամունքն և օրէնքն կրկին հաստատեց գերութիւնիցն յետ դարձած Հրէից մէջ: Դարեհի յաջորդն Արտաշէս ալ ուղարկեց Նէեմիա անուամբ Հրէայ իշխանին որ Թագաւորի մատռուակն էր՝ Երուսաղէմի պարսպներն շինելու, քանզի մինչև այն ժամանակն քաղաքն առանց պարսպի մնացած էր



և Հրէայք շրջակայ ժողովրդներիցն, մանաւանդ Սամարացւոցնից շատ նեղութիւն կ՚կրէին: Հրէայք Նէեմիու առաջնորդութեամբն մին կողմից պարիսպն կ՚շինէին, միւս կողմից նոցա արգելել ուզող դրացի ազգերի դէմ կ՚կռուէին:

Հ. Պարսից Թագաւորներն ընդհանրապէս ի՞նչպէս կ՚վարուէին Հրէից հետ:

Պ. Աստուծոյ մասնաւոր նախախնամութեամբն Պարսից Թագաւորներն մարդասիրաբար կը վարուէին Հրէից հետ: Այս Թագաւորներիցն Ասուերոս կամ Քսերքսէս որ ամէնիցն գոռոզն էր՝ Եսթեր անուամբ մի բարեպաշտ աղջիկ իւրն կին առեց: Եսթեր Մուրթքէ անուամբ մի ազգական ունէր, որ Թագաւորի պալատումն էր, նորա մեծ հաւատարմութիւն էր ցոյց տուած: Բայց Քսերքսէսի իշխանների միջումն Համան անուամբ մի երևելի մարդ կէր, որ շատ թշնամի լինելով Հրէից, Թագաւորիցն հրաման հանել տուեց Պարսից տէրութեան մէջ գտնուած բոլոր Հրէիցն ջնջել: Բայց Եսթեր Քսերքսէսի առաջն գնալով յայտնեց նորան իւր Հրէայ լինելն, և Համանի հրէից դէմ պատրաստած դաւաճանութիւնն: Համան կախուեց և Հրէայք ազատուեցին:

Հ. Յուդայի Թագաւորութիւնն ջնջելով Հրէիցն Բաբելոն գերի տանող Բաբելացիք ո՞վ էին:

Պ. Բաբելացիք, որ Քաղդէացի ալ կասուին, երկար ժամանակ Ասորեստանցւոց իշխանութեան տակումն մնալուց յետոյ, Մարաց հետ միաբնելով կործանեցին Ասորեստանցւոց տէրութիւնն, և Նոցա մայրաքաղաքն Նինուէ Իսրայէլի Թագաւորութեան կործանուելուցն իբր 100. տարուց յետ: Նաբուգոդոնոսոր Բաբելոնի Թագաւորն շատ զօրացրեց և ընդարձակեց Քաղդէացւոց տէրութիւնն, մինչև Եգիպտոս և Պաղեստին տիրեց շատ Թագաւորութիւնք ջնջելով, որոնց մինն էր Յուդայի Թագաւորութիւնն:

Հ. Բաբելացւոց կամ Քաղդէացւոց վերայ ինչ կ'իմացուի:

Պ. Բաբելացւոց կամ Քաղդէացւոց կրօնքն, արուեստներն, գիրն, որ սեպաձև կոչուած գիրն է, սովորութիւններն, իսկ Ասորեստանցւոց կրօնքին, արուեստներին, գրին, և սովորութիւններին նման էին. միայն Քաղդէացիք աւելի գիտուն էին, մանաւանդ աստղագիտութիւնն ծաղկած էր նոցա մէջ: Նոցա մայրաքաղաքն Բաբելոն շատ երևելի էր շինուածքների կողմանէ: Ունէր շատ լայն պարսպներ, փառաւոր պալատներ, մեհեաններ, և պարտէզներ: Հրէից գերի տանող Նաբուգոդոնոսորէն փոքր տարուով յետ Բաբելոն առնուեց Պարսկներիցն, և մայրաքաղաք լինելէն դադարելով փոքր առ փոքր ընկաւ, և այժմ բոլորովին աւերակ է:



Բաբելոնի երևելի աւերակների մինն ալ Պիրնէմրուտ, կամ Նեբրովթայ աշտարակ կոչուածն է:

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

## ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Հ. Մինչև այժմ բաց'ի յիշուած պատմութիւններից Հրէից վերայ ուրիշ ինչ պատմութիւններ կան Աստուածաշնչի մէջ:

Պ. Մինչև այժմ յիշուած պատմութիւններն գրուած էին Հին կտակարանի եբրայեցերէն լեզուով գրուած գրքերի մէջ: Հին կտակարանի վերաբերեալ ուրիշ մի քանի գրքեր ալ կան որոնք Յունարէն լեզուով գրուած են, ինչպէս են Տովբիթայ, Յուդիթայ և Մակաբայեցւոց կոչուած գրքերն, որոնք եբրայեցերէնի մէջ գտանուելով՝ ըստ ոմանց անկանոն գրքեր կ'համարուին: Բայց այս գրքերի մէջ ալ Հրէից վերաբերեալ մի քանի

մասնաւոր և ընդհանուր դէպքեր կ՚յիշ-ուեն :

Հ. Տովբիթայ գրքի մէջ ինչ կ՚պատմուի :

Պ. Տովբիթ Ասորեստանի Սաղմանասար Թագա-ւորի գերի տարած տասն ցեղերէն մի բարե-պաշտ մարդ էր, և մի դիպուածով աչքն կուրանալուցն յետ, փողի կարօտ լինելով, իւր որդւոյն Տուբիային մի առնելիք պահան-ջելու համ Մարաց երկիրն կուզի ուղարկել, և երբ նորա համար ճանապարհի մի ընկեր կ՚խնդրէր, Ռափայէլ հրեշտակն երիտասարդի կերպարանքով երևալով ընկեր կ՚լինի Տու-բիային : Տուբիա ճանապարհում մի ձուկն կ՚բռնի, և հրեշտակի խրատովն կ՚պահի նր սիրտն, լեարդն և լեղին : Տուբիա ճանա-պարհում իւր մի ազգականի տունն կ՚գնայ նորա Սառա անուամբ աղջկան իւրն կին առ-նելու համար : Սառա եօթն անգամ հարս դարձած էր, և ամէն անգամ հարսանեաց առաջին գիշերում մի դև գալով սպանած էր փեսային : Տուբիա Սառայի հետ պսակ-ուելու առաջին գիշերում, հրեշտակի խը-րատի համեմատ, ձկան լեարդն և սիրտն կը-րակի վերայ ծխելով դևին կ՚փախցնի և ինքն ու աղջիկն մահից կազատուեն : Վեր-ջապէս Տուբիա փողն առնելով յետ կ՚դառ-նայ տուն, ուր նոյնպէս հրեշտակի խրատովն ձկան լեղին կ՚քսի հօր աչքերին, և աչքերն կ՚բացուեն : Տովբիթ չիմանալով որ Տուբիայի



ուղեկիցն հրեշտակ է, կ՚ուզի նորան վարձա-տրել, բայց նա իւր ով լինելն յայտնելով, և նոցա խրատներ տալով աներևոյթ կ՚լինի :

Հ. Յուդիթայ գրքի մէջ ինչ կ՚պատմուի :

Պ. Յուդիթ գեղեցիկ և բարեպաշտ կին էր Հրէ-աստանի Բետուղիա քաղաքում : Այս քա-ղաքն Ասորեստանի Նաբուգոդոնոսոր (Ա-սորդան) Թագաւորի զօրապետից Հողոփեռ-նէսից կ՚պաշարուի, քաղաքացիք մեծ նե-ղութեան մէջ կ՚ընկանին . բայց Յուդիթ Հո-ղոփեռնէսի բանակն գալով նորա հետ շատ քաղցրութեամբ կ՚խօսի, և գիշերն մնալով Հողոփեռնէսի վրանի միջում կ՚կտրի նորա գլուխն, երբ նա քուն կ՚լինէր, և գիշերով գաղտնի բանակիցն դուրս գալով կ՚գայ քա-ղաքն, և Հողոփեռնէսի գլուխն ցոյց կ՚տայ Բետուղիացւոց, որոնք հետևեալ առաւօտն կ՚յարձակուեն Ասորեստանցւոց վերայ, և նո-քա իմանալով իւրեանց զօրավարի սպան-ուած լինելն սարսափուած կ՚ցրուեն :

Հ. Մակաբայեցւոց գրքերի մէջ ինչ կ՚պատ-մուի :

Պ. Պարսից Թագաւորութեան բոլոր ժամանա-կում Հրեայք հանգիստ անցկացան : Պարսից Թագաւորութիւնն կործանող մեծն Աղէք-սանդր, յոյն աշխարհակալն ևս, յարգեց ճշմարիտ Աստուծոյ տաճարն և քահանայից, Հրէից ևս մարդասիրութիւն ցոյց տուեց :

Հ. Աղէքսանդրի մահիցն յետ Հրեայք ինչ ե-

ղեն ։

Պ․ Աղեքսանդրի մահիցն յետ, նորա զօրավարներիցն մինն, Պտղոմէոս, Եգիպտոսի Թագաւորն Հրէաստանի ևս տիրելով, հազարաւոր Հրէայք գերի տարաւ Եգիպտոս ։ Պտղոմէոսի որդին և յաջորդն սիրով էր Հրէից հետ, և Աստուածաշնչի գրքերն Եբրայեցերէնից Յունարէն թարգմանել տուէց ։ Այս թարգմանութիւնն է որ Եօթանասնից կ'կոչուի, և Հայերէն Աստուածաշունչն սորանից թարգմանուած է ։

Հ․ Հրէայք որչափ ժամանակ Պտղոմեանց իշխանութեան տակումն մնացին ։

Պ․ Հրէաստան երբ հարիւր տարի Պտղոմեանց իշխանութեան ներքոյ մնալուց յետ, Սելևկեան կ'ոչուած Ասորւոց Թագաւորների ձեռքըն ընկաւ ։

Այս Թագաւորներիցն Անտիոքոս Եպիփան այլ և այլ հնարիւք Հրէայքներիցն հազարաւոր մարդիկ կռապաշտ շինէց․ բայց գըտնըուեցին այնպիսի բարեպաշտ Հրէայք, ինչպէս Եղիազար անուամբ մի ծերունի քահանայ և եօթն եղբարք իւրեանց մօրովն, որ մարտիրոս դարձան՝ չուզելով ուրանալ իւրեանց հաւատքն ։

Պ․ Հրէիցն Ասորւոց Թագաւորների բռնութիւնիցն ով ազատէց ։

Հ․ Յուդա Մակաբէ մի քաջ Հրէայ, հրէական կրօնքին նախանձաւոր մի շատ մարդիկ իւր



մօտն ժողովելով, Անտիոքոսի և նորա յաջորդների յանդիման կ'ռուելով և շատ յաղթութիւններ առնելով, մի անկախ հրէական իշխանութիւն հաստատէց ։ Մակաբեան տանիցն Յուդայի յաջորդող իշխաններն քահանայապետ, միանգամայն Թագաւոր էին ։

Մակաբեանց իշխանութիւնն 130․ տարի տևելով ջնջուէց, և Հռովմայեցիք տիրելով Հրէաստանին Քրիստոսից երբ 37․ տարուով յառաջ, Հրէից վերայ Թագաւոր դրին Հերովդէս անուամբ մի օտարականի, որի ժամանակումն ծնուէց Քրիստոս տէրն մեր ։

## ՄԱՍՆ Բ.

### ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ

Հ. Նոր կտակարանի պատմութիւնն քանի գլխաւոր ժամանակ կ'բաժանուի :

Պ. Նոր կտակարանի պատմութիւնն կ'բաժանուի երեք գլխաւոր ժամանակ :

Ա. Քրիստոսի ծնունդէն մինչեւ նորա քարոզութեան սկիզբն (1 – 30 Յետ Քրիստոսի) :

Բ. Քրիստոսի քարոզութիւնէն մինչեւ նորա համբարձումն (30 – 33. Յ. Ք)

Գ. Քրիստոսի համբարձումէն մինչեւ Առաքելոց ժամանակի վերջն (33 – 66. Յ. Ք.) :



## Ա. ԺԱՄԱՆԱԿ

### ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԻՑՆ ՄԻՆՉԵՒ ՆՈՐԱ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲՆ (1 – 30. Յ. Ք.)

Հ. Քրիստոսի ծնունդն ինչպէս եղեւ :

Պ. Գաբրիէլ հրեշտակն արդէն աւետած էր կոյս Մարիամին Յիսուսի ծնունդն : Այն ժամանակ Հրէաստան Հռովմայեցւոց իշխանութեան տակումն էր, և Հռովմայեցւոց կայսրն Օգոստոս հրաման արած էր աշխարհագիր առնել իւր բոլոր տէրութեան մէջ : Մարիամ և նորա այրն Յովսէփ որ Գալիլիոյ Նազարէթ քաղաքումն կ'բնակէին, Դաւթի ցեղից լինելով աշխարհագրի մէջ մտանելու համար Դաւթի քաղաքն Բեթղեհէմ եկան : Այն տեղ ծնուեց Յիսուս մի մսրի մէջ, քանզի Մարիամ և Յովսէփ իջեւանի տեղ չգտանելով՝ մի գոմի (եզների ախոռի) մէջ իջեւան էին արած :

Հ. Յիսուսի ծնանելուցն յետ ինչ պատահեց :

Պ. Արեւելքի կողմն երեք մոգեր մի աստղ տեսանելով իմացան թէ մի մեծ թագաւոր ծնուած էր, և նորան երկրպագութիւն տալոյ հա-

մար Երուսաղէմ գալով հարցրին թէ ի՛նչ տեղ էր Հրէից Նոր ծնուած արքայն : Հերովդէս որ այն ժամանակում Հռովմայեցւոց կողմից կ'թագաւորէր Հրէաստանի վերայ, մոգերիցն լսելով թէ Հրէից համար մի թագաւոր ծնուած էր, խռովեցաւ, կարծելով թէ Յիսուս Հրէից համար պէտք էր որ մարմնաւոր թագաւոր լինէր, և ուզելով Նրան կորցնել, և տեղեկանալով թէ Քրիստոս Բեթղեհէմում պիտի ծնուէր, Բեթղեհէմի սահմանի մէջ երկու տարեկանից ցած բոլոր տղէրքոնց ջարդել տուեց, յուսալով թէ Յիսուս մանուկն ևս այն մեռնողների հետ պիտի կորնէր : Բայց Յովսէփ հրեշտակիցն իմանալով որ Հերովդէս Յիսուսին կ'խորհէր կորցնել, վերառեց երեխին և Նորա մօրն, Եգիպտոս գնաց . և Հերովդէսի մահիցն յետ կրկին Նազարէթ յետ դարձաւ :

Հ. Յիսուսին Եգիպտոս գնալուցն յառաջ ի՛նչ պատահեց :

Պ. Յիսուս Նախ ութն օրական լինելով թլփատուեց, քառասուն օրական լինելով ևս տաճարն բերուեց : Հրէից սովորութիւնն էր, Մովսիսական օրինաց համեմատ, ութն օրուայ տղայքին թլփատել, ինչպէս որ մեք այժմ կ'մկրտենք, քառասուն օրականն ևս տաճարըն տանել : Տաճարի մէջ Սիմէոն անուամբ մի ծերունի Յիսուսին գիրկն առնելով օրհնեց, և ասեց թէ Նա էր մարդկան փրկիչն, և մարգարէաբար գուշակեց թէ Յիսուս չարչարուելով պիտի մեռնէր : Այս Սիմէոն ծերունին Աստծուց հրաման առած էր չմեռանել, բայց թէ Քրիստոսին տեսնելուցն յետ :



Հ. Յիսուս մինչև քարոզութիւնն սկսելն Նազարէթի մէջում ի՛նչպէս կեանք անցկացրեց, և այն միջոցում ի՛նչ պատահեց :

Պ. Յիսուս շնորհօք և իմաստութեամբ կ'մեծանէր և հնազանդ էր իւր ծնողացն : Նորա ծնողքն Մարիամ և Յովսէփ, ըստ սովորութեան բարեպաշտ Հրէից, ամէն տարի Զատկի տօնին Երուսաղէմ կ'գնային տաճարն : Մի անգամ այսպէս Զատկի ժամանակում, երբ Նորա ծնողքն Երուսաղէմ կ'դառնային, Յիսուս Երուսաղէմում մնաց : Մարիամ և Յովսէփ կ'կարծէին թէ Յիսուս միւս ուղևորների հետ էր, բայց յետոյ չտեսանելով Նրան ուղեկցաց հետ, սկսեցին Նորա գտանելու համար մանգալ, և երեք օրից յետ գտան Նրան որ Երուսաղէմի տաճարի մէջ նստած Հրէից վարդապետների հետ կ'խօսէր մեծ իմաստութեամբ և կ'զարմացնէր Նոցա :

# Ե. ԺԱՄԱՆԱԿ

## ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԻՑՆ ՄԻՆՉԵՒ ՆՈՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ (30–33. Յ. Ք.)։

Հ. Յիսուս իւր քարոզութիւնն ինչպէս սկսեց։

Պ. Երբ Յիսուս քարոզութիւն պիտի սկսէր, Գալիլեայից Յորդանան եկաւ Յովհաննէս Մկրտչի մօտ Նորանից մկրտուելու և մկրտուելուց յետ երկինքն բացուեց, Հոգին Սուրբ աղաւնոյ կերպարանքով իջաւ Նորա վերայ, երկնքից ևս ձայն եկաւ թէ Աստուծոյ սիրելի որդին էր Յիսուս։

Հ. Յովհաննէս Մկրտիչն ով էր։

Պ. Յովհաննէս Մկրտիչն Զաքարիա անուամբ մի քահանայի որդին էր. Նորա անունն ևս Եղիսաբեթ էր։ Յովհաննէս իւր պառաւ մօրից հրաշքով ծնուելուցն յետ երբ մեծացաւ, սկսեց քարոզութիւն անել՝ մարդկանց յորդորելով առ ապաշխարութիւն և մկրտելով. աւետելով նաև Քրիստոսի գալուստն։ Այս Յովհաննէս Մկրտիչ Հրէաստանի Հերովդէս թագաւորին յանդիմանելու համար բանտի մէջ գլխատուեց։



Հ. Յիսուս մկրտուելուցն յետ ինչ արեց։

Պ. Անապատ գնաց ուր քառասուն օր և քառասուն գիշեր ոչ կերաւ և ոչ խմեց և սատանիցն փորձուելով Նորան յաղթելէն յետ սկսեց իւր քարոզութիւնն։

Հ. Յիսուս որչափ ժամանակ քարոզեց և ինչ բաներ արեց այն միջոցումն։

Պ. Յիսուս երեք տարի բոլոր Հրէաստանի և Գալիլեայի մէջ պտտելով քարոզութիւն արեց և այն միջոցումն շատ ճշմարտութիւններ սովորացրեց և մեծամեծ հրաշքներ գործեց։

Հ. Յիսուս միայնակ կ'քարոզէր թէ օգնական ունէր։

Պ. Յիսուս Առաքեալ կոչուած 12. աշակերտներ ունէր որոնք միշտ Նորա հետ կ'պտտէին, և որոնց գլխաւորներն էին Պետրոս, Յովհաննէս և Յակոբոս։

Հ. Յիսուսի սովորացրած գլխաւոր ճշմարտութիւններն որո՞նք են։

Պ. Յիսուսի սովորացրած գլխաւոր ճշմարտութիւններն սոքա են։

Նախ սովորացրեց թէ Աստուած մեր գթած Հայրն է որ մեզ ամէն կերպով կ'խնամի, այնպէս որ մեր գլխից մի մազ անգամ չի անկանիլ առանց Նորա հրամանին, այսպէս ուզեց յորդորել մեզ որ բոլորովին Աստուծոյ ապաւինինք, և սորա համար Տէրունական աղօթքն սովորացրեց որ է Հայր մեր։

Երկրորդ սովորացրեց թէ ինքն մեզ

փրկելու համար աշխարհ եկած էր, և թէ պի-տի մեռնէր խաչին վերայ մեզ աստուծոյ հետ հաշտեցնելու համար, բայց յետոյ յարութիւն առնելով երկինքն պիտի համբառնէր Աստուծոյ մօտ մեզ համար բարեխօս լինելու, և 'ի կատա-րածի աշխարհիս պիտի գայր արդարներին և մեղաւորներին դատելու :

Երրորդ սովորացրէց թէ մեք երբոր ու-ընելու, երբոր Վերայ գուր ունենալու, և մեք ալ միմեանց յանցանք և ողորմութիւն ներելու ենք, եթէ կուզենք որ Աստուած ալ մեր յանցանք-ները ների :

Հ. Յիսուս ի՞նչ երևելի հրաշքներ գործեց :

Պ. Յիսուսի հրաշքների մեծ մասն բժշկու-թիւններ էին, ինչպէս հիւանդները և անդամալոյծները բժշկել, կաղերին գնացնել, կոյրերը տեսանել տալ, և մեռելները յարուցանել, ինչպէս Ղա-զարոսին որ չորս օրական մեռած էր, կանչե-լով գերեզմանից հանեց :

Մի քանի անգամ ալ քիչ հացով հա-զարաւոր մարդիկ կերակրեց. մի անգամ ալէ-կոծուած ծովին սաստելով հանդարտացրեց, մի անգամ ալ ծովի վերայ քայլելով գնաց :

Հ. Յիսուս իւր առաջին հրաշքն ո՞ւր և ինչ-պէս արեց :

Պ. Յիսուս իւր մօր հետ Գալիլեացւոց Կանա քաղաքն մի հարսանիք էր գնացած : Հարսան-քի մէջ մայրն իմացրեց նորան թէ գինին պակասած էր, և Յիսուս թակոյկներով լըց-



ուած ջուրն հրաշքով գինի փոխեց :

Հ. Յիսուս Հրէայներին ի՞նչ ընդունելութիւն գտաւ :

Պ. Ժողովուրդն կ'սիրէր Յիսուսին, և մեծ բազ-մութեամբ նորա յետևից կ'գնային, բայց Հրէից փարիսեցիներն և քահանայապետներն կ'ա-տէին Յիսուսին, քանզի Յիսուս շատ անգամ կ'յանդիմանէր զնոսա իւրեանց կեղծաւորու-թեան և ագահութեան համար : Վերջապէս Հրէից Քահանայքն և Մեծերն խորհուրդ ա-րին որ սպանեն Յիսուսին :

Հ. Հրէայք իւրեանց խորհուրդն ինչպէս կա-տարեցին :

Պ. Յիսուսի աշակերտներին մինն որ Յուդա կ'կոչ-ուէր՝ փող խոստացան որ նրան մատնէր իւ-րեանց : Մի գիշեր երբ Յիսուս իւր աշակերտ-ների հետ Գեթսեմանի կոչուած պարտէ-զումն գնացած էր աղօթք անել, Յուդա Հրէայքներէից շատ մարդիկ հետն առնելով եկաւ և ցոյց տուեց նոցա զՅիսուս . նոքա ալ բռնելով և կապելով նրան տարան քահա-նայապետի մօտ և ապա առ Հռովմայեցի դա-տաւորն Պիղատոս ( քանզի այն ժամանակն Հրէաստան Հռովմայեցւոց կ'վերաբերէր ), և նորա մահուան համար վճիռ հանել տալով խաչն ուսի վերայ տարան Գողգոթա և խաչե-ցին :

Հ. Յիսուս չգիտէ՞ր որ Հրէայքներից պիտի սպանուէր, և չէ՞ր կարող իւրն ազատել նոցա

ձեռնից :

Պ. Յիսուս գիտէր Հրէից խորհուրդն, և յառաջագոյն ասած էր իւր աշակերտներին թէ Հրէից ձեռն պէտքէր ընկանէր, պիտի ծեծուէր և պիտի սպանուէր, կարող էր նաև հրաշքով նոցա ձեռնից ազատուել, բայց մարդոց փրկութեան համար յանձն առեց չարչարուել և մեռնել :

Հ. Յիսուս Հրէից ձեռն մատնուելուցն յառաջ ինչ արեց :

Պ. Նախ իւր աշակերտներիցն մի քանի հոգի հետն առնելով մի սար գնաց, և այն տեղ այլակերպեցաւ, այսինքն երեսն լուսաւորուեց : Մի ուրիշ օր ևս ի յաւանակի վերայ նստելով Երուսաղէմ մտաւ մեծ բազմութեամբ որ "Ովսաննա" կ'աղաղակէին : Վերջապէս իւր մատնուելոյ գիշերն որ Հրէից զատիկն էր՝ իւր աշակերտներովն մի վերնատան միջում ընթրիք արեց և հաղորդութեան Ս. խորհուրդն հաստատեց :

Հ. Երբ Յիսուս մատնուեց, նորա աշակերտներն ինչ արին :

Պ. Պետրոս ուրացաւ, միւսներն ևս ցրուեցան, բայց յետոյ բոլորքն ևս զղջացին, բաց 'ի մատնիչ Յուդայից, որ, երբ Յիսուսի դատապարտութիւն տեսաւ, յուսահատուելով գնաց ինքն իւրն կախեց :

Հ. Յիսուսի խաչելութեան ժամանակումն ինչ զարմանալի բաներ պատահեցին :



Պ. Յիսուսի խաչելութեան ժամանակումն արեգակն խաւարեց, մեծ երկրաշարժ եղև. գերեզմանքն բացուեցին, և շատ սուրբ մարդիկ յարութիւն առին :

Հ. Յիսուս մեռնելուցն յետ ինչ եղև :

Պ. Յովսէփ Արիմաթացի անուամբ մի երևելի և բարեպաշտ իշխան Պիղատոսից խնդրեց Յիսուսի մարմինն, և նորան խաչիցն վէր բերելով թաղեց քարէ մի նոր գերեզմանի մէջ զոր իւր համար էր շինած :

Հ. Հրէայք ինչ արին :

Պ. Հրէայք Պիղատոսի հրամանովն գերեզմանն կնքեցին, և պահապան զինուորներ դրին, վախենալով թէ գուցէ աշակերտներն գողանալով նորա մարմինն՝ սուտ համբաւ հանէին թէ յարութիւն առեց : Բայց Յիսուս գերեզմանն դրուելուց երեք օրից յետ, այսինքն կիրակի առաւօտն, յարութիւն առեց, և եղած շարժմունքիցն պահապաններն վախենալով փախան :

Հ. Յիսուսի յարութիւն առած լինելն ինչպէս իմացուեց :

Պ. Յիսուսին հաւատացող մի քանի բարեպաշտ կնանիք, որոնց գլխաւորներն էր Մարիամ Մագդաղենացին, կիրակի առաւօտն եկան Յիսուսի մարմինն օծել, բայց գերեզմանն թափուր գտանելով մինչ կ'զարմանային, հրեշտակներ երևալով աւետեցին նոցա Յիսուսի յարութիւնն, նոքա ևս ուրախութեամբ եկան պա-

տըմեցին առաքելոց :

Հ. Յիսուս յարութիւնէն յետ ինչ ըրաւ :

Պ. Քառասուն օր երկրի վերայ մնաց, և շատ անգամ երևալով իւր աշակերտներին նոցա շատ բաներ սովորացնելուցն յետ, մի օր նոցա Զէթենեաց սարն տարաւ, և այն տեղ զնոսա օրհնելով, նոցա առաջին համբարձաւ երկինքն :

## Գ. ԺԱՄԱՆԱԿ

### ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒԵԼՈՒՑՆ ՄԻՆՉԵՒ ԱՌԱՔԵԼՈՑ ԺԱՄԱՆԱԿԻ ՎԵՐՋՆ (33 - 66. Յ. Ք.)

Հ. Յիսուսի համբարձուելուցն յետ առաքեալք ինչ արին :

Պ. Առաքեալք և ուրիշ հաւատացեալներ Յիսուսի պատուէրանի համեմատ, Երուսաղէմի մէջ, մի տեղում ժողովուած սպասեցին Հոգւոյն Սրբոյ գալստեանն զոր Յիսուս խոստացած էր նոցա : Յիսուսի համբարձուելուց տասն օր յետ, Պենտեկոստէի կիրակին, յանկարծ առաքելոց գտնուած տունն շարժեց, և Հո-



գին սուրբ հրեղէն լեզուներու տեսլեամբ վէր-եկաւ նոցա իւրաքանչիւրի վերայ :

Հ. Հոգին սուրբ երբ որ դեռ չէր եկած առաքեալք ինչ նշանաւոր գործք արին :

Պ. Ուզելով ամբողջացնել 12. առաքելոց թիւն որ Յուդայի մահուամբն 11. եղածէր, ժողովով Մատաթիա անուամբ մէկին ընտրեցին, որ 12. առաքելոց կարգն դասուեց :

Հ. Հոգին սուրբ առնելուցն յետ առաքեալք ինչ արին :

Պ. Սկսեցին այլ և այլ լեզուներ խօսել, և զօրանալով և քաջալերուելով սկսեցին աւետարանն քարոզել և հրաշքներ գործել :

Հ. Առաքեալք ինչ բան կ'քարոզէին, և նոցա քարոզութիւնն ինչ արդիւնք ունեցաւ :

Հ. Առաքեալք սուրբ գրքեցն վկայութիւններով կ'ցուցանէին թէ խաչեալ Յիսուսն մարգարէից բերանով խոստացուած Քրիստոսն էր (Մեսիայն, օծեալն) և կ'յորդորէին մարդկանց նորան հաւատալ, և հաւատացեալներին կ'մըկրտէին : Առաքելոց քարոզութիւնն այնպէս ազդու էր որ լսողներեցն հազարաւոր մարդիկ յետ կ'դառնային, մանաւանդ երբ նոցա գործած հրաշքներն կ'տեսնէին : Այսպէս Պետրոսի առաջին քարոզութեամբն երեք հազար անձինք իսկոյն հաւատացին :

Հ. Առաքեալք ինչ երևելի հրաշքներ գործեցին :

Պ. Պետրոս տաճարի դրան նստացող մի 'ի ծնէ

հողի, և Ենեաս անուամբ մի անդամալոյծի բըժշկեց : Տաբիթա անուամբ մի բարեպաշտ կնոջ ևս յարոյց : Անանիէն և նորա կնոջ Սափիրէն որ սուտ էին խօսեցած՝ Պետրոսէն հանդիմանուելով վեր ընկան մեռան :

Հ. Հրեայք առաքելոց արածներուն տեսնելով ինչ արին :

Պ. Նախ նոցա կոչելով պատուիրեցին Յիսուսի անուամբն չքարոզել, և տեսնելով որ նոքա դարձեալ կ'քարոզէին և հաւատացելոց թիւն կ'բազմանէր, սաստիկ հալածում հանեցին նոցա ընդդէմ: Երբեմն կ'ծեծէին նոցա, երբեմն շղթայակապ բանտ կ'դնէին : Պետրոս ևս բանտ դրուեց և պիտի սպանուէր Հրէից չար խորհրդովն, բայց մի հրեշտակ բանտէն հանեց Պետրոսին :

Հ. Քրիստոնէութեան մէջ առաջին մարտիրոսն ով եղև :

Պ. Առաջին մարտիրոսն եղև Ստեփաննոս : Ստեփաննոս ճարտասան և համարձակախօս լինելով քաջութեամբ կ'վիճաբանէր, և կ'ըյաղթէր Հրէից, որոնք նախանձով և բարկութեամբ լցուած բռնեցին և քարկոծեցին նըրան : Յետոյ սպանել տուին նաև զՅակոբոս առաքեալն Հերովդէսի ձեռնով :

Հ. Առաջին հաւատացեալներին հալածողներին մէջ ով երևելի կ'յիշուի :

Պ. Սօղոս անուամբ մի երիտասարդ, որ Երուսաղէմի հաւատացեալներին շատ նեղութիւններ



տալուց յետ, քահանայապետներէն հրաման առնելով Դամասկոս կ'գնէր այն տեղի հաւատացեալներին ևս հալածել, բայց Յիսուս նորան երևեցաւ սաստիկ լուսով և յանդիմանեց նորան : Սորա վերայ Սաւուղ յետ դառնալով մի նախանձաւոր քարոզիչ եղև Աւետարանին : Այս է Պօղոս առաքեալն, որ հեթանոսաց մէջ տարածեց Քրիստոնէութիւնն :

Հ. Պօղոս ինչ երևելի գործեր արած է :

Պ. Պօղոս սաստիկ հալածում կ'րեց Հրեայքներէն, անհնարին նեղութիւններով շրջեցաւ փոքր Ասիոյ և Յունաստանի մէջ, շատ եկեղեցիներ հաստատեց, մեծամեծ հրաշքներ գործեց, վերջապէս Հռոմ գնալով այն տեղ մի քանի տարի քարոզեց և շատ աշակերտներ ունեցաւ :

Հ. Պօղոս որ գլխաւոր քաղաքների մէջ եկեղեցիք հաստատեց :

Պ. Եփեսոս, Գաղատիա, Կորնթոս, Փիլիպպէ, Թեսաղոնիկէ, Հռոմ. որոնք այն ժամանակ լուսաւորեալ աշխարհի ամենից երևելի քաղաքներն էին : Պօղոս Աթէնքի մէջ ևս մի փառաւոր քարոզութիւն արեց :

Հ. Պօղոս ինչ երևելի հրաշքներ գործեց :

Պ. Լիւսդրայի մէջ 'ի ծնէ կաղ մի բժշկեց : Տրովադայի մէջ յարոյց Եւտիքոս անուամբ մի պատանի որ տան բարձր յարկէն վերընկանելով մեռած էր : Պօղոս այնպէս հրաշագործ էր որ նորա թաշկինակն անգամ հիւանդ-

ների համար տանուելով բժշկութիւններ կ'կատարէր :

Հ. Պօղոսի իբր գործակից ով կ'յիշուի :

Պ. Պօղոսի իբր գործակից կ'յիշուեն Ղուկաս, Շիղա, Տիմոթէոս, Տիտոս, և ուրիշ շատեր : Սոցա բոլորքն ևս երևելի առաքեալներ կամ քարոզիչներ էին առաջին քրիստոնէական եկեղեցւոյ մէջ :

Հ. Առաքեալք և նոցա հաստատուած եկեղեցիքներն ինչ եղան :

Պ. Եկեղեցիքներն կ'ծաղկէին և երթալով կ'բազմանային : Իսկ առաքելոց գալով՝ Նոր Կտակարանի պատմութիւնն կ'հասնի մինչև Պօղոսի Հռոմ գնալը : Բայց աւանդութիւնից և ուրիշ պատմութիւններից կ'սովորենք որ Պօղոս և Պետրոս Հռոմում սպանուեցին : Միւս առաքելոց համար ևս կ'ասուի թէ աշխարհիս ամէն կողմերն գնալով քարոզեցին աւետարանն, և գրեթէ բոլորքն ևս մարտիրոսական մահուամբ մեռան : Թադէոս առաքեալն որ երկոտասաններից մինն էր՝ Հայաստան գալով Հայոց Սանատրուկ թագաւորի հրամանովն սպանուեց, ինչպէս որ մեր ազգային պատմութեան մէջ կ'յիշուի :

Հ. Մինչև ցայժմ պատմուածներն ուր յիշուած են :

Պ. Մինչև ցայժմ պատմուածներն յիշուած են չորս Աւետարանների և Գործոց Առաքելոց մէջ : Չորս աւետարաններն գրած են Մատթէոս,



Մարկոս, Ղուկաս և Յովհաննէս առաքեալք : Սոքա Նոր Կտակարանի գրքերն են. բայց սոցանից կան նամակներ զորս գրած են Պօղոս, Պետրոս, Յովհաննէս, Յակոբոս և Յուդա (ոչ մատնիչն) : Յովհաննէս գրած է նաև Յայտնութեան կոչուած գիրքն :

ՎԵՐՋ

# ՑԱՆԿ

## ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ


Յառաջաբան . . . . . . . .

Նախագիտելիք . . . . . . . . 1

Մաս Ա. Հին կտակարանի պատմութիւնն . 2

Ա. ժամանակ. աշխարհի ստեղծուելուցն մինչև ջրհեղեղ . . . . . . 3

Բ. ժամանակ. Ջրհեղեղիցն մինչև Աբրահամու կոչումն . . . . . . . 8

Գ. ժամանակ. Աբրահամու կոչումիցն մինչև Իսրայէլացւոց Եգիպտոսից ելքն . . 11

Դ. ժամանակ. Եգիպտոսից ելքիցն մինչև Հրէից Թագաւորութեան սկիզբն . . 29

Ե. ժամանակ. Թագաւորութեան սկզբիցն մինչև Բաբելոնի գերութիւնն . . . . 40

Իսրայէլի Թագաւորութիւնն . . . . . 46

Տասն ցեղի գերութիւնն . . . . . . 49

Յուդայի Թագաւորութիւնն . . . . . 52

Մարգարէք . . . . . . . . . . 55

Ե. ժամանակ. Բաբելոնի գերութիւնիցն մինչև Քրիստոսի գալուստն . . . . . . 57

Յաւելուած Հին կտակարանի պատմութեան . 63

Մասն Բ․ Նոր կտակարանի պատմութիւնն․ 68
Ա․ Ժամանակ․ Քրիստոսի ծնունդէն մինչև Նորա քարոզութեան սկիզբն . . . 69
Բ․ Ժամանակ․ Քրիստոսի քարոզութիւնէն մինչև Նորա համբարձումն . . . 72
Գ․ Ժամանակ․ Քրիստոսի համբարձումէն մինչև Առաքելոց ժամանակի վերջն . 78

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL041061

# ՑԱՆԿ

Գրոց տպագրելոց 'ի Տպարանի Ամե-նափրկչեան Սրբոյ Վանաց սկսեալ 'ի 1872. էն մինչ ց' 1879. ամ Տեառն:

---

| | | |
|---|---|---|
| Ալեքսանդրեան. | Օրինակ. | 1000 |
| Հեգարան, որ է Քաջանան Սաղմոս. | | 1000 |
| Համառօտ Հայոց Պատմութեան. | | 1000 |
| Հասարակապատուամ Մաերայ. | | 1000 |
| Տարերք Հայերէն քերականութեան Հ. Արսէնի Կ. Բագրատունւոյ. | | 500 |
| Օրացոյց վասն 1878, և 1879, ամաց Տեառն. | | 300 |
| Զանազան Յայտարարութիւնք և Տոմսակք Հարսանեաց: | | |
| Համառօտ Պատմութիւն սուրբ Գրոց Ա. Մ. Գարագաշեանի: | | 500 |

---

Տպագրիչք սոյն գրոց եղեն
Միքայէլ Տէր Յովհաննէսեան. և
Մարգար Կ. Դաւթեան.